1789
6. X. 3

№ 1 (219) XXII ՏԱՐԻ ՅՈՒՆՈՒԱՐ 1912

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arméniénne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

ՊԻԷՌ ԿԻՅԵԱՌ

Մի անողոք մահ և մի ծանր կորուստ...

Հեռագիրը գուժեց Պարիզից մեր խմբագրութեան, որ Պիէռ Կիյեառ յանկարծամահ է եղել։ Ընդամենը 47 տարեկան հասակում, իր հարուստ ձիրքերի զարգացման գագաթին, գերեզման է իջնում այն մարդը, որ բոլոր հայասէր եւրոպացիների մէջ ամենահարազատն էր մեզ համար՝ մի մտերիմ, մի ընկեր, աւելի քան ընկեր — բարեկամ... Այդ բառի իսկական նշանակութեամբ, այդ գաղափարի ամենավեհ իմաստով։ 17 տարուց ի վեր նա անդադար շեփորում էր անկարեկիր աշխարհի առջև հայ ժողովրդի նիւթական և ողբերգական դատը, նրա արիւնոտ ճգնաժամն ու օրհասը։ 12 տարուց ի վեր նա մեզ հետ էր, „Դաշնակցութեան" հետ, բաժանում էր մեր աջողութիւնների բերկրանքը և ձախորդութիւնների վիշտն ու դառնութիւնը... Մեր շարքերից է, որ պոկւում է մի խոշոր դէմք, հայոց մռայլ երկնակամարից է, որ անհետանում է մի պայծառ և հրապուրիչ աստղ։

Ֆրանսիացի էր, յեղափոխական Ֆրանսիայի հարազատ զաւակներից, Դանտոնների ու Բլանկիների խանդավառ երկրպագու, մի ճշմարիտ „համաշխարհային քաղաքացի", մի շիտակ քաղաքացի, որ վազում էր ամեն տեղ, ուր Պարտքի հրամայական ձայնը կոչում էր իրեն, նետւում էր երիտասարդական անշէջ խանդավառութեամբ՝ բոլոր արդար դատերի մէջ, բոլոր մարդասպան բռնութիւնների ու անիրաւութիւնների դէմ, խօսում էր, գրում էր, թափօրում ու պայքարում — և այդ անխոնջ պայքարի մէջ գտնում էր իր գերագոյն երջանկութիւնը։

Կիյեառի մահը — սուգ է հայ ժողովրդի, հայ երիտասարդութեան համար։ Ասւած է, որ ամեն մարդ երկու հայրենիք ունի — իր սեփականը և ապա Ֆրանսիան։ Ֆրանսիացի Կիյեառը երկու սիրւած ու գուրգուրած հայրենիք ունէր — իր սեփականը և Հ ա յ ա ս տ ա ն ը...

Մեր վիշտը մեծ է և այս վայրկեանիս մտադիր չենք ներկայացնելու այդ հրապուրիչ կեանքը իր այլազան արտայայտութիւնների մէջ։ Մենք յետոյ ցոյց կը տանք, թէ ինչ էր հանգուցեալը մեզ համար, հայ ժողովրդի, հայ դատի համար։

1911—1912

Փորձութեան տարի էր Ի ս լ ա մ ի համար։

Գրո՜հ ամեն կողմից... Ֆրանսիան Մարոկկոի դէմ, Ռուսաստանը և Անգլիան՝ Պարսկաստանի դէմ, Իտալիան՝ Թիւրքիոյ Տրիպոլիսի դէմ... Խաչը և մահիկը վաղուց այսքան կատաղաբար չէին զարնւել իրարու. մի կատարեալ „խաչակրաց արշաւանք" է, բայց ոչ այլ ևս յանուն ճնշւած քրիստոնէութեան, այլ յանուն... քաղաքակրթութեան, որ բռնաւոր աշխարհակալողները խոստանում են մտցնել այդ խաւար, յետամնաց երկիրներում։

„Հեռքից գնացին" Մարոկկոն և Պարսկաստանը։ Առաջինը պաշտօնապէս մտաւ արդէն Ֆրանսիայի բացարձակ խնամակալութեան տակ, դարձաւ երկրորդ Եգիպտոս. իսկ վերջինը տարուբերւում է կեանքի և մահու մէջ, ռուսական սանդալներից ոտնահարւած և արիւնած։

Հեռքից կ'երթայ և Թիւրքական Տրիպոլիսը։ Մի վայրկեան նրա յարուցած տագնապը սպառնաց ընդհանուր տակնուվրայում, վտանգի մատնեց ամբողջ երկրի գոյութիւնը... Մի վայրկեան կար, երբ Ռուսաստանի անակնկալ պահանջի հանդէպ, նեղուցների խնդրի առթիւ, քաղաքակիրթ մարդկութիւնը սարսուռով մտածում էր, թէ հասել է յաւիտենական „հիւանդ մարդու" ճակատագրական վախճանը։ Բախտը, սակայն, այս անգամ էլ ժպտաց օսմանեան կիսալուսնին, պարիզեան կարճատև դեսպանաժողովը Սազոնովի մասնակցութեամբ, գտաւ, ըստ երևոյթին, որ վայրկեանը դեռ պատեհ չէ, որ դեռ պէտք է սպասել։

Որքա՜ն խրատական են այդ անակնկալ տագնապները Թիւրքիայի վարիչների համար, որքա՜ն հրահանգիչ են նրանք, մասնաւորապէս, մեզ համար։ Բորբոքւում էր մի հրդեհ, որ կարող էր կլանել մեզ։ Պատրաստ էի՞նք դիմադրելու...

Ամբողջ տարին Երիտասարդ Թիւրքիան ներկայացրեց

ներքին տխուր երկպառակութիւնների մի քստմնելի տեսարան։ Բաւական չէ, որ նա միանգամայն անընդունակ էր յայտնուում կանգնելու ժամանակի պահանջների բարձրութեան վրայ, ղեկլու երկրի անիւը դէպի ճշմարիտ վերածնութիւն, կազդուրելու համիդիականութեան բացած խորունկ վէրքերը, կազդուրելու հայերին, մակեդոնացիներին, հին ռէժիմի ոմենամեծ զոհերին, բաւական չէ, որ մոլեռանդ, սահմանափակ մտայնութեամբ նա ազատ ասպարէզ էր տալիս գաւառներում հակաքրիստոնէական, մասնաւորապէս հակահայկական բնազդներին, լռելեայն սրբագործում էր հրոսակների աղաղակող ոճիրները և դրանով իսկ խրախուսում էր յետադիմման հոսանքը, դրանով իսկ միջամտութեան պատրուակ տալիս արտաքին ոսոխներին, — Երիտասարդ Թիւրքիան՝ անգամ իր հայրենիքի ամբողջութեանն ուղղակի սպառնացող պատերազմի ու ճգնաժամի հանդէպ՝ անկարող եղաւ պահպանել միութիւն ու ներդաշնակութիւն և մնաց միշտ պառակտուած, հակամարտ, անդամալոյծ... Կուսակցական ծանծաղամիտ պայքարները զինադադար բնաւ չունեցան, — պայքարներ՝ որ միանգամայն զուրկ էին գաղափարային աստառից, որ մեծ մասամբ պտտուում էին անձերի ու աթոռների շուրջը, մեծ մասամբ տոգորուած էին փառատենչ, կորստաբեր ախորժակներով, որոնք և հասցրին ներկայ ծանր ճգնաժամին, Պատգամաւորական Ժողովի լուծման. Փոխանակ լուծելու կուսակցական կրքերը այս հանդիսաւոր և դրամատիկ օրերում և բոլորը իբրև մէկ մարդ ծառանալու արտաքին թշնամու դէմ — ինչպէս որ ընդունուած է իւրաքանչիւր շատ թէ քիչ բարեկիրթ պետութեան մէջ — նրանք՝ զուտարիւն օսմանցիները՝ տուին աշխարհին պերճախօս ապացոյցներ իրենց ներքին համաձարակ փըտախտի... Այն ժամանակ, երբ այդ աշխարհը սպասում էր, թէ երիտասարդ Թիւրքերը պիտի ցոյց տային, որ սահմանադրական ռէժիմի տակ Թիւրք պետական օրգանիզմը թարմացել է և աւելի ուժով ու ներդաշնակութեամբ, աւելի գիտակցօրէն և հայրենասիրական աւելի մեծ աւիւնով պիտի նետուի հայրենիքի թշնամիների դէմ։

Ահա տխուր իրողութիւններ, որ բղխում են տարաբնոյ անցքերի թռուցիկ տեսութիւնից, իբրև ահաւոր մի խստանիշ, որ հարցական նշանի տակ է դնում՝ Թիւրք վարիչ մարմինների քաղաքական ու քաղաքացիական հասունութիւնը, դրա հետ նաև երկրի ապագան...

Պատմութիւնը կրկնուում է... Նոյն պատկերն էր երբեմն, Բիւզանդական կայսրների օրով, երբ օսմանցիք սպառնալի կանգնել էին Կ. Պոլսի պատերի առջև, իսկ ներսը տիրում էր մի անհնարին երկպառակութիւն, մոքերի, ուղղութիւնների կործանարար մի շփոթ...

Աղգինեան վիլայի կալանաւորը կարող է թերևս իրաւամբ նկատել իր քաջամարտիկ ախոյեաններին. „երբ ես էի միահեծան հրամանատարը կայսրութեան՝ պատերազմի ժամանակ, ճիշտ է, ես էլ չէի փրկում հայրենիքի ամբողջութիւնը, բայց գէթ իմ՝ օրով երկիրը կազմում էր միաբան, ներդաշնակ, կուռ ու կազմ մի բանակ“...

***

Պատմութիւնը կրկնուում է — նաև մեզ համար։ Երբ ամիսներ սրանից առաջ փոթորիկը նորէն պայթեց, աշխարհը իրարու անցաւ և Արևելքի խաղաղութիւնը մի մազից էր կախուած մնացել — մենք վերստին հարց էինք տալիս, յանկարծակիի եկած. „Ի՞նչ ենք մենք, ո՞ւր ենք դիմում, ո՞ւր է մեր ազգային քաղաքականութիւնը... Ի՞նչ էական մտահոգութիւններով է տարուած „ազգը“ իր երևելիներով, իր խոհուն գլուխներով, իր Ազգային Ժողովով և ազգային իշխանութիւններով։ Ունի՞նք արդեօք դիմադրելու կարողութիւն, գէթ ինքզինքիս պաշտպանելու միջոցներ“...

Եւ այդ հարցը շարունակ վերադառնում է մեր շրթների վրայ, քանի որ ապրում ենք „նեարդային“, վտանգաւոր ժամանակաշրջանում, քանի որ շարունակ նորանոր անակնկալներ են առաջանում — ազգերի ճակատագիրը յեղաշրջող անակնկալներ։

Պատասխանը ծանօթ է։ Ժողովրդի բացառիկ կացութեան հանդէպ և նոր հնարաւոր պատահարների դիմաց՝ „ազգը“ — ինչպէս „հին, բարի ժամանակներում“ — իր հրատապ, կենտրօնական հոգսերն ունի՝ իր եկեղեցիներն ու վանքերը, գերեզմանատները, Էջմիածինը, կաթողիկոսը, Երուսաղէմը, Աղթամարը... Նա շարունակում է իր աւանդական պաշտօնը՝ լինել սոսկ կրօնական համայնք, երբէք քաղաքական, նա շարունակում է եկեղեցիների ու դպրոցների մէջ տեսնել հայ ժողովրդի փրկութեան խարիսխը։ Զուրկ ազգային ճշմարիտ քաղաքականութեան դիրքորոշիչներից՝ տիրացու ազգը նախկին թուլամորթ երկչոտութեամբ փակուում է իր պատեանի մէջ, նա չի լսում իր շուրջը ղողանջող ահազանգերը, չի անդրադառնում ժողովուրդների կեանքն ալեկոծող անցքերի վրայ և փախչում է զարհուրանքով հայ քաղաքական կուսակցութիւններից, հրաժարուում է նրանց գոյութեան խարիսխը կազմող յաւիտենական և նզովեալ խնդիրներից ու հոգսերից։ „Ազգի“ համար հազար անգամ աւելի հրատապ և աւելի հրապուրիչ խնդիրը կար — հայոց կաթողիկոսի ընտրութիւնը. և ամբողջ տարի նա մնաց մի տեսակ ելեքտրական տրամադրութեան մէջ, ամբողջ ամիսներ հայոց մթնոլորտը թանդում էր՝ անդուլ ու խրոխտ մարտակոչերից Կ. Պոլսից մինչև Թիֆլիս տենդային կերպով մտազբաղ էին, թէ ով պիտի բազմի մի անփառունակ և գրեթէ նաև անբովանդակ ու ֆիկտիվ գահի վրայ *)...

*) Ձենք միանգամայն ժխտում կաթողիկոսական ընտրութիւնների արժէքը։ Այս անգամ նրանք տեղի տուին, կով-

Այդպէս ենք եղել միշտ։ Անհուն եռանդ ու կորով ենք սպառել՝ այդ կարգի խնդիրների վրայ և յանցաւոր կարճամտութեամբ զանց ենք առել ազգային ինքնապահպանութեան առաջնակարգ պահանջը, որին ամեն բան հպատակւում է, որին ամեն բան պէտք է հպատակի։ Այդպէս էին և մեր երևելի նախնիքները, սկսած վերածնութեան առաջին օրերից, 60-ական թւականներից, երբ նրանց ձեռքը տրւեց „Ազգային Սահմանադրութիւն“ կոչեցեալ թուղթը, երբ հոգիների կապանքները մասամբ փշրւեցին և լեզուները բացւեցին... „Ազգերնիս կը յառաջադիմէ կոր“—ասացին նրանք և հոսեցրին անվերջ ու պերճ ճառերի հեղեղները... Երևակայեցին, թէ ազգն արդէն երջանկացած է, օրօրւեցին տասնեակ տարիներ սին պատրանքով՝ թէ հայութիւնը արդէն իսկ քաղաքական ստորոգելիներով օժտւած ազգ է, մինչդեռ նրան տրւած էր Սահմանադրութիւնը, իբրև սոսկ կրօնական-լուսաւորչական համայնքի և նա մնում էր այդպիսին։ Ոչ ճառերի հեղեղները և Ազգային Ժողովի պերճախօս մրցումները, ոչ վանքերի ու դպրոցների վերաշինումն ու բազմացումը չէին մտցնում իրական բարօրութեան և ոչ մի շող, ճառագայթ մորթոտւող հայաստանցու խրճիթի մէջ... Եւ երբ հասան պատմական թւականները, երբ արևելեան թատերաբեմում խլրտացին ժողովուրդները իրենց ուրոյն պահանջներով ու ձգտումներով, երբ արևմտեան դիւանագիտական արէօպագում ազգերի կենդանութեան միակ, ազդու, խորհրդաւոր բանաձև յայտարարւեց. „Je m'insurge, dons je suis!“ (ես ապստամբում եմ, ուրեմն և գոյութիւն ունիմ)—հայոց „ազգը“ այն ատեն միայն զգաստացաւ, ըմբռնեց ցաւով ու ցասումով, որ մոլորւել է, որ սխալ ճամբով է առաջ տարել իր գոյութեան նաւակը, որ չէր արել, ինչ որ պէտք էր, չէր պատրաստել „հարիսան“ վայելելու համար Խրիմեանի *post factum* ջատագոված „երկաթէ շերեփը“, չէր յարմարւել, մի խօսքով, տիեզերական գոյամարտի անգորոյն պատգամներին... և մեր „ազգի“ յանցանքով, էֆէնտիների, բուրժուաների և բուրժուատիպ մտաւորականութեան յանցանքով՝ Բերլինեան պատիւրակութիւնը վիժեց, հայոց արդար գանգատները վիժեցին և թիւրքահայ ժողովուրդը այնուհետև ամբողջ 30 տարի շարունակ գաււած մնաց չարչարանքի ու դժոխային նահատակութեան մահճի վրայ։

„Անցեալն է ա՞նց“... Ո՛չ։ Այդ անցեալը պէտք է միշտ որոճանք, պէտք է միշտ ունենանք աչքի առջև և քաղենք նրա ծոցից հրահանգներ՝ ներկայի համար։ Պատմութիւնը կրկնւում է միակերպ, համանման արարածներով՝ միայն անկիրթ և կիսակիրթ ցեղերի համար, որոնք ոչինչ չեն ուսանում անցեալից և դիւրութեամբ հողմերին ու ջրերին են յանձնում այդ պատմութեան ամենացնցող դրւագները՝ այդ անցեալի ամենատրաժիկ դասերը...

35 տարի է անցել—և այն ժամանակւայ սակաւաթիւ զգաստ ու ըմբոստ ձայները զարմանալի թարմութիւն են պահպանում մեր օրերում։ Ահա թէ ինչ էր գրում Բերլինի կօնգրէսի նախօրեակին մի ըմբոստ եկեղեցական, Կ. Պոլսի „Փունջ“-ի մէջ (1878 թ. ապրիլի 29).

... „Որչա՜փ անհուն տարբերութիւն մեր և պուլղարաց մէջ. զի մեր տւած զոհերը տգիտութեան զոհեր են, անտարբերութեան զոհեր, հայրենատեցութեան զոհեր...

... „Հայոց ազգ... սովորած է ստրկութեան... Իր անմիտ երկչոտութիւն մինչև այն աստիճան հասած է, որ իր թշւառ վիճակին վրայ խռովելու նշան անգամ չի յայտնէր.. Երբեմն իր յոյսը Սահմանադրութեան վրայ դրած էր... Այսօր ալ իր բոլոր ակնկալութեանց կեդրոն ըրած է դպրոցները և կրսպասէ, որ դպրոցներէն գտնէ ազատութիւն։ Բայց մի՞թէ այսքան ժամանակներէ հետէ ազգը դպրոց ունեցած չէր, որ չի կարաց ազատիլ և մի՞թէ դպրոցի՞ն մէջ կը սոիվի Հայն արիւնռուշտ Քիւրդին թուրը ջախջախել...

„Հայը կրնայ քաղաքակիրթ, ճարտար, գործունեայ, լուսաւորեալ և սահմանադրական ազգ մ՚եղած ըլլալ, բայց... կրնա՞յ առանց ամաչելու հաստատել, թէ ազգին կեանքն ապահովեալ է“...

Երեսունուհինգ տարի է անցել գրեթէ։ Եւ մենք ակամայ համեմատում ենք անցեալն ու ներկան։ Նրանք ոչ միայն համեմատելի են, այլ և խիստ նման, տարաբախտաբար... Պատմական միջավայրը դարձեալ յղի է „դէպքերով“, անակնկալներով։ Հայաստանը դարձեալ բացառիկ օրէնքի տակ։ Հայ ժողովրդի ընդհանուր վիճակը՝ լի դառնութեամբ ու յուսահատութեամբ։ Գրեթէ բոլոր „թագրիրներն“ ու բողոքները — ձայն

կասահայ „ինտելիգենտ“ աշխարհում, մտքերի ու դաւանանքների մի անօրինակ շփոթի, մի կատարեալ մտային աբերրատիօնի և տարրալուծման, որին թերևս կը վերադառնանք մի յօդւածով։ Մի կողմը թողնենք՝ որ անգամ այդտեղ, կաթող. ընտրական պայքարի մէջ, մերթ թագուն, մերթ բացարձակ, հաղիւ հաղ վարագուրած ձևով առաջ էր տարւում կռիւը... Հրապարակից բացակայող „Դաշնակցութեան“ դէմ։ Բայց առանց վերջինի գործակցութեան էլ՝ հայ ժողովրդական բնազդը չխոտորւեց ուղղ ճանապարհից, նա կարողացաւ գէթ զանազանել մաքուրը անմաքուրից, շիտակ զարնեց և յաղթանակեց։ Երկրորդ ուշագրաւ իրողութիւնը այդ ահագին imbroglio-ի մէջ հայ կուսակցական քարտէզի փոփոխութիւնն էր—շատերի համար վաղուց սպասելի։ Հ. Յ. Դաշնակցութեան գոյութիւնը դեռ շա՞տ այդպիսի քարտէզային յեղաշրջումներ և ուժերի փոխադրութիւններ պիտի յարուցանէ մեր խոպան մտաւոր հրապարակում։ Իրողութիւնն այն է, որ հին ազատախոհ, „առաջադիմական“ կուսակցութիւնը ջնջեց իսպառ և անկեղծօրէն իր սահմանացոյց գծերը (lignes de démarcation) իր երբեմնի ախոյեան՝ կղերապահպանողական հաւատի հետ, ձուլւեց նրա հետ, կուռեց նրա հետ թև թևի տւած և անպատիւ պարտութիւն կրեց։

Այսուհետև մնում է հայ օրինական գործունէութեան ասպարէզում՝ մի կղերական-պահպանողական բլոկ, առանց ներքին գաղափարային տարբերումների և նրա դիմաց մի երկչտա, թոխմախօս լիբերալիզմ։

բառբառոյ յանապատի։ „Ազգի“ ընդհանուր մասնութիւնը նոյնն է մնացել, գրեթէ նոյնը՝ համազգային ինքնապահպանութեան կարդինալ հոգսի առջև։ Քրդական հրոսակների անպատիժ թռիչքների հանդէպ՝ շարունակում ենք հոլովել „Երուսաղէմ“ ու „Աղթամար“։ Ազգի ճնշող ընդհանրութիւնը մի սրտառուչ հաւատարմութեամբ կապած է մնում... „փայտէ չերեփի“ դաւանանքին։

Այդտեղ է մեր կացութեան յաւիտենական տրագիզմը։

ՍՕՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՕՑԻԱԼԱԿԱՆ ՏԱՐՐԸ ՌՈՒՍԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Ժողովուրդների հասարակական կեանքի մէջ, բնաշրջումի երկար ու բարդ ճանապարհի վրայ՝ գրականութիւնը իր յատուկ պաշտօնն ունի, իր կարևոր և նշանակալից դերը։

Նա կեանքի, միջավայրի արդիւնք է անշուշտ. ժամանակից և տարածութիւնից դուրս չէ անկասկած։ Բայց նա որոշ կեանքի և որոշ միջավայրի գոյութեան ազդակներից է միանգամայն։ Եթէ առանց հասարակական օրգանիզմի՝ գրականութեան ծնունդն անմտածելի կը լինէր, այնպէս էլ առանց գրականութեան՝ հասարակական օրգանիզմի զարգացումը ծանր վտանգների կը զարնուէր։

Կեանքի և գրականութեան յարաբերութիւնը միակողմանի ու տարամերժ չէ։ Շարժումը առաջինից հաղորդւում է երկրորդին. բայց այնտեղ չի մեռնում, այնտեղ չի ոչնչանում։ Նա զուտում է գրականութեան մէջ, կանոնաւորւում, հաւաքում իր քաօսական ալիքները և ապա, մաքուր ու յստակ, դառնում դէպի կեանքը։ Գրականութիւնը մի անշարժ, անկենդան զանգուած չէ, ուր կորչին, անէանան կեանքի բաղխումները. նա մի անյատակ խաւար չէ, ուր ոչնչանան շրջապատի լոյսերը, անարձագանք ու անվերադարձ։ Այդ բաղխումներն ու լոյսերը, կեանքի այդ յաւիտենական յորձանքները միշտ դառնում են դէպի յետ, դէպի միջավայրը։ Եթէ կեանքը ազդում է գրականութեան վրայ, վերջինս էլ կեանքից լուսաւորուած՝ կանոնաւորում է նրա ընթացքը, բնորոշում է նրա ուղղութիւնը։ Քաղաքակրթութիւնը, յառաջադիմութիւնը այս կրկնակի շարժումների արդիւնքն է։ Պատմութիւնը այս փոխադարձ ազդեցութեան հետևանքն է։

Առարկայական և ենթակայական, նիւթական և իդեական ներգործութիւնների մի մասն է կազմում կեանքի ու գրականութեան պրոբլեմը։ Ինչպէս պատմութիւնը տարամերժօրէն առարկայական ուժերի ստեղծագործութիւն չէ, ինչպէս քաղաքակրթութիւնը միմիայն նիւթական պատճառների ծնունդ չէ, այնպէս էլ հասարակական բովանդակ բնաշրջումը միմիայն կեանքի անգիտակից թաւալումների պտուղը չէ։ Այստեղ դեր ունին „ենթակայական“ ուժերը ևս, դեր ունին իդեական պատճառներն ևս — գրականութիւնն ևս...

Պատմական որոշ դէպքեր քննելու ժամանակ՝ չպէտք է բաւականանանք մակերևոյթական ու միակողմանի դիտողութիւններով. մենք պարտաւոր ենք որոնել բոլոր այն պատճառները, որոնք համախմբելով՝ առաջ են բերել այս կամ այն եղելութիւնը։ Եւ այս հետազոտութեան ժամին, ընկերաբանական-իմաստասիրական այս որոնումների ընթացքում՝ մենք յաճախ հանդիպում ենք գրականութեան։ Մենք տեսնում և հաստատում ենք, որ գրականութիւնը, իր մէջ ամփոփելով ժամանակի ձգտումներն ու համադրութիւնները, դառնում է հասարակական իրողութիւնների կարևոր գործօններից մին։ Վերլուծելով կեանքի երևոյթները, ուսումնասիրելով մարդկային բովանդակ յարաբերութիւնները, յստակօրէն ու կենդանի ներկայացնելով շրջապատի արժէքները՝ գրականութիւնը հանդիսանում է մի գիտակցական ազդակ և իբրև այդպիսին մտնում է ժողովուրդների հոգեբանութեան ու տրամաբանութեան մէջ։ Եւ այնուհետև, այսպէս կազմակերպուած ժողովուրդները, այսպէս զարգացած հասարակութիւնները կատարում են, իրագործում այս կամ այն պատմական ակտը։ Գաղափարական գործօնները, իդեաուժերը (*idée-force*), որոնց դերը պատմական երևոյթների ծագման մէջ յաճախ չափազանց նշանակալից է՝ արտայայտւում են գրականութեամբ։ Անհատի և հասարակութեան գիտակցութիւնը ապրում է ու կազմակերպւում գրականութեան ազդեցութեան ներքոյ։ Եւ եթէ առարկայական հանգամանքներին չհաղորդի ժողովուրդների կամ անհատների գիտակցութիւնը՝ „պրոգրէսը“, առաջադիմութիւնը ասպարէզ չեն գայ։

Որոշ ժամանակի և որոշ դէպքերի նկատմամբ գրականութիւնը ներկայանում է իբր անմիջական ազդակ, իբրև մերձաւոր պատճառ։ Հասարակական կեանքի քննադատը, հասարակական երևոյթների մեկնաբանը բաւականանում է այդ անմիջական ազդակի վերլուծութեամբ։ Անշուշտ նա կարող է և պարտաւոր է մատնանշել նաև անուղղակի գործօնները — եթէ նրանք բաւարարաչափ հարկաւոր են — կարող է ցուցահանել նաև հեռաւոր պատճառները, բայց նա չի կարող և ամենևին պարտաւոր չէ այդ ուղղութեամբ անվերջ առաջ գնալ։ Եթէ պատմագրի, ընկերաբանի համար հարկադրական դարձնենք հեռաւոր պատճառների հետախուզութիւնը, ապա անկարելի կը դառնայ որոշ ժամանակի և որոշ իրողութեան բացատրութիւնը։ Բնական փաստերը միմեանց հետ շղթայուած են անվախճանօրէն։ Ամեն անգամ գտնուած պատճառի պատճառին հետամտելով, ամեն անգամ գտնուած բացատրութեան բացատրութիւնը որոնելով՝ մենք անխուսափելիօրէն պիտի դիմենք դէպի նախնական պատճառը...

Այսպիսով ընկերաբանական գիտութիւնները կը դառնան բնազանցութիւն և հասարակական երևոյթների մեկնաբանութիւնը կը դառնայ բնազանցական խաղ։ „Պատճառների պատճառը“ տեղ չունի գիտութեան ոլորտում։ Սկզբնական, նախագոյ պատճառի հետազոտութիւնը ոչ բնագիտական և ոչ հասարակագիտական պրոբլէմ է։ Ընկերական-բնական կեանքի մէջ բնազան-

ցական մեթոդի կիրառութիւնը ոչ մի դրական հետևանք չի տար։ Այդ ճանապարհով մենք երբեք չենք կարող պատմական որոշ ժամանակաշրջան և որոշ իրողութիւն լուսաբանել ու հիմնաւորել։ Այսպիսով բոլոր ժամանակներն ու բոլոր եղելութիւնները մի հատիկ ծագումն կունենան, մի սկզբնական ու միայնակ պատճառ։ Եւ այդ մի հատիկ ծագումը ուրիշ ոչինչ չի լինի, բայց եթէ բնազանցագէտների առաջին պատճառը, որ խաւարի ու յաւիտենական մշուշի մէջ է և որ թերևս երբեք էլ չի յայտնագործուի։

Հասարակական երևոյթները քննելիս մենք պիտի որոնենք առաւել կամ նուազ մերձակայ պատճառներ։ Պիտի ցուցահանենք այն առաւել կամ նուազ անմիջական ազդակները, որոնք տուեալ ժամանակում տուեալ իրողութիւնն են արդիւնաւորել։ Այս միջավայրում և այս հողի վրայ՝ նախնական պատճառի հետազօտութիւնը ամուլ աշխատանք է։

Եթէ հասարակագէտը, եթէ պատմաբանը կարողանում են որոշ պատճառներ արձանագրել, որոնք տուեալ ժամանակաշրջանում և տուեալ տարածութեան վրայ որոշ հետևանքներ են առաջացրել—նրանք դրանով իսկ կատարում են իրենց կոչումը։ Չենք կարող պահանջել, որ ընկերաբաններն ու պատմագէտները լուսաւորելով որոշ իրողութեան հիմքերը՝ լուսաւորեն նաև այդ հիմքերի հիմքերը, և այսպէս անվախճան... Բաւական է, որ յայտնի ուժ—լինի նա առարկայական թէ ենթակայական, նիւթական թէ իդէական — ներգործելով կեանքի բազմազանութեան վրայ՝ պայմանաւորել է որոշ փաստի ծնունդը կամ զարգացումը...

Այս ընդհանուր սկզբունքները շօշափելի դարձնելու համար, գրականութեան և կեանքի փոխադարձ ազդեցութիւնը յստակօրէն ներկայացնելու համար՝ կանգ առնենք մի օրինակի վրայ, որ այնքան բովանդակալից է և որ իրապէս շատ բան է ապացուցանում։ Ֆրանսիական Մեծ Յեղափոխութեան և տասնութերորդ դարի գրական շարժման ներքին, բարոյական կապը յիրաւի շատ է նշանակելի։ Այս մի հատիկ պատմական օրինակի մէջ ակնյայտ երևում է գաղափարական գործօնների և մասնաւորապէս գրականութեան խորունկ ազդեցութիւնը հասարակական և քաղաքական անցուդարձերի վրայ։ Մեծ Յեղափոխութեան պատմիչները, քրքրելով այդ հոչակաւոր եղելութեան հիմքերը, նիւթական-տնտեսական-դասակարգային պատճառների հետ վեր են հանել նաև գրականութեան կարևոր դերը։

Միապետութեան դժոխային յանցանքները, պալատական անհաշիւ ու առասպելական ծախսերը, ազնուականութեան և կղերականութեան բիրտ ու այլանդակ արարքները, գիւղացիութեան սարսափելի թշուառութիւնը, միջին դասերի, քաղաքային բնակիչների ստրկական, անազատ վիճակը, հարկերի և զանազան տուրքերի անխիղճ բաշխումը, պետական գանձարանի սնանկութիւնը,.. Այս բոլորը անշուշտ հզօրապէս պայմանաւորեցին յեղափոխութեան անհրաժեշտութիւնը։ Բայց միաժամանակ այդ բոլոր պարագաները—անկախ հասարակական մտքից, հաւաքական գիտակցութիւնից, բարոյական-կենսական ըմբռնումից—չէին կարող արտադրել այն մեծախորհուրդ ու բարդ իրողութիւնը, որի անունն է Ֆրանսիական Յեղափոխութիւն։ Երկար տարիների հետևողական ու սիստեմատիկ աշխատանքով՝ տասնութերորդ դարի գրական-փիլիսոփայական հանճարեղ գրիչները միջավայրի, առարկայական կառուցուածքի մէջ պայծառ մի տաք դրին, խորունկ գիտակցութիւն և յստակ ըմբռնում։ Մի Մոնտէսքիօ իր խոհուն, լուրջ ու ծանր նկարագրով ֆրանսիացիների առջև հանեց անգլիական սահմանադրութեան բարիքները, քաղաքական ազատութեան օգուտները, հրահանգեց պետական վերակազմութեան անհրաժեշտութիւնը։ Մի Վոլտէր իր սրամիտ, կենդանի, խորաթափանց ոգով, իր շեշտակի ու իմացական խառնուածքով, իր դասական հեգնութեամբ խարխլեց միապետութեան, ազնուականութեան և կղերականութեան գահերը։ Մի Դիդրօ իր քննադատական, վերլուծական ուղեղով, իր բազմակողմանի, հանրագիտական պաշարով հին ռէժիմի խոցերը և բովանդակ փտութիւնը հարուածեց։ Մի Բիւֆֆօն իր համակարգուած և բարձր տրամաբանութեամբ, կործանեց մարդու ծագման աստուածային թէօրիան՝ բնութեան առաջ բոլոր մարդկանց ծնունդը հաւասար հռչակելով։ Մի Ռուսսօ իր լայն ու մոլեգին թափով, իր խորունկ զգացմունքով, իր արմատական կենսահայեցողութեամբ միապետների գերիշխանութեան հինաւուրց սկզբունքը ջախջախեց և ժողովուրդների գերիշխանութեան գաղափարը ներբողեց... Եւ այսպէս շարունակ։ Լուսաւորեալ դարի գրական մեծանուն դէմքերը այս հինգ անձով չեն սահմանափակուում։ Նրանք դարձեալ կան և ամենքը միասին մի հիմնական գաղափարի՝ մի կենտրոնական մտքի քարոզողներն են։ Գրականութիւնը հաստատուած այդ մտաւոր հսկաների հեղինակութեան վրայ՝ իր պատմական դերը կատարեց։ Յ. Յեղափոխութեան շառաչալից վայրկեաններին այս կամ այն հեղինակն էր տուն տալիս բուռն դէպքերին, ուղղութիւն տալիս հասարակական հոսանքներին՝ իր գերեզմանից, իր յաւիտենական բնակարանից։ Նրանց գրքերը նոր կեանքի և նոր հասարակութեան աւետարանները դարձան...

Կարելի է անշուշտ առաջ տանել պատմական հետախուզութիւնը և հարցնել թէ՝ հապա իրենք, այդ գրականութեան ներկայացուցիչները ի՞նչ պայմանների ծնունդ էին։ Այս հետախուզութեան մէջ էլ, սակայն, տնտեսական-նիւթական պարագաներից զատ՝ մենք կը հանդիպինք գաղափարական տարրերի, իդէական հիմքերի և անհատական գործօնների... Եթէ այս վերջին պայմանների պայմանները ևս քրքրելու լինենք՝ դարձեալ նոյնը. միշտ դասակարգային-տնտեսական կողքին գաղափարական իդէականը. միշտ առարկայականի հետ ենթակայականը, անհատականը։ Նախնական պայմանն է միայն, առաջին պատճառը բոլոր երևոյթների, որի մասին գիտութիւնները լռում են, որի նկատմամբ խօսք չունի նաև ընկերաբանութիւնը։

Եւ այսպէս, բացայայտ է գրականութեան ազդեցութիւնը հասարակական երևոյթների վրայ։ Մեր կեանքի մէջ ևս կարելի է գտնել այս ճշմարտութիւնն ապացուցանող օրինակներ։ Յակաւին գրուած չէ մեր յեղափոխական շարժումների պատմութիւնը, բայց և այնպէս, հաստատ կերպով կարելի է պնդել, որ այդ շարժումների վրայ մեծ ներգործութիւն է ունեցել հայ գրականութիւնը։

Մի Աբովեան, մի Նալբանդեան, մի Ստեփան Ոսկան, մի Բաֆֆի, մի Պատկանեան, մի Ծերենց և շատ ուրիշները տարիների ընթացքում մթնոլորտ պատրաստեցին, սերունդներին գիտակցութիւն հաղորդեցին։ Եւ այս բարոյական մթնոլորտի մէջ դաստիարակուած ժողովուրդն էր, որ յեղափոխութեան դիմեց իր դարաւոր և մարդկային իրաւունքները պաշտպանելու համար։

Այստեղ մենք չենք ծանրանում մեր կեանքի և մեր գրականութեան փոխադարձ յարաբերութեան վրայ։ Յօդուածի շարունակութեան մէջ մենք բաւական մանրամասն պիտի շօշափենք այդ խնդիրը։ Առայժմ հարցի յիշատակութեամբ միայն մենք կամեցանք ընթերցողի երևակայութիւնն ամբողջացնել և ցոյց տալ, որ ֆրանսիական միջավայրից դուրս ուրիշ տեղ էլ նոյն երևոյթը նկատելի է...

Բնական աշխարհի մէջ ևս բացատրութեան նոյն մեթոդն է տիրապետում,—որոնել երևոյթների առաւել կամ նուազ մերձակայ պատճառները և չտարուիլ մետաֆիզիքական պատրանքներով։ Ծովի ափին ապրում էր մի ողորմելի բուսական։ Ալիքները ուժգնութեամբ թափուեցին նրա վրայ և խորտակեցին նրա կեանքը։ Բուսականի մահուան պատճառը ալիքները եղան, ուրեմն։ Բայց նկատեցէք, որ ալիքների գոյութեան խնդիրը ևս կարելի է հետազօտութեան նիւթ դարձնել։ Փոթորիկ, օդի հոսանք, բնութեան խաղեր. և եթէ կամենանք ալիքների վերջնական աղբիւրը գտնել, որքա՞ն պէտք է խորանանք դէպի տիեզերական շարժումները, դէպի հեռաւոր ու անծանօթ բաղխումները։

Այս ճանապարհով ոչինչ չի կարելի մեկնաբանել և երևոյթները—լինին նրանք բնական թէ հասարակական—միշտ էլ մշուշի մէջ կը մնան..

—

Սոցիալական կեանքի զանազան ձևերը, միջավայրի ոգին, ժամանակի տրամադրութիւնները հաղորդւում են գրականութեան, որքան էլ այդ գրականութիւնը անհատական գունաւորում ունենայ, որքան էլ նրա մէջ ենթակայական տարրերը տիրապետող լինին։ Հեղինակները գրական ստեղծագործութիւնների վրայ դնելով իրենց հոգու կնիքը՝ դնում են նաև շրջապատող կեանքի դրոշմը։ Անգամ գրականութեան այն տեսակները, որոնք գերազանցապէս անհատական են—երգերը, բանաստեղծութիւնները, դրամաները, լիրիքական զեղումները — ազատ չեն սոցիալական տարրից։ Ամեն տեղ ուշադիր վերլուծողը կարող է գտնել հասարակական ձայնի արձագանքը և սոցիալական կառուցուածքի արտացոլումը։ Նախնական ժամանակների ուսումնասիրութեան համար՝ յաճախ դիմում են գրական այն յիշատակարաններին, որոնք արտադրուած են անցեալում և որոնք որևէ կերպ մեզ են հասել։ Շատ ոնգամ մի հատիկ պօէմա, մի բանաստեղծութիւն, մի երգ կարող է լոյս սփռել հինաւուրց հասարակական յարաբերութիւնների վրայ և ցուցահանել նախնական միջավայրի մէջ բնորոշ կողմը, մէկ առանձնայատուկ գիծը։ Հեղինակներն ապրելով որոշ ժամանակում և որոշ միջավայրում չեն կարող նետուել, դուրս գալ իրենց շրջապատից բացարձակապէս։ Նրանց երկերը, նրանց խոհերը, նրանց յոյզերը սնընդւում են այն մթնոլորտում, ուր ապրում է ստեղծագործողը։ Եւ այս մթնոլորտի ընդհանուր կերպարանքը միշտ փոխանցնում է գրականութեան։

Կարելի է մի հասարակական զարգացման ընթացքը որոնել գրականութեան մէջ։ Կարելի է մի ժողովրդի սոցիալական բնաշրջումը, էւոլիւսիոնը նկատել գրականութեան մէջ։ Կարելի է մի ազգի քաղաքակրթութեան ընդհանուր պատկերը նշմարել այնտեղ։ Անշուշտ, բոլոր գրականութիւնները միևնոյն ծաւալով չեն արտայայտում հասարակական կեանքը։ Անշուշտ, սոցիալական տարրը հաւասար քանակութեամբ չէ ցոլանում բոլոր ազգերի և բոլոր անհատների ստեղծագործութիւնների մէջ։ Ազգային և անհատական տարբերութիւններ միշտ կան, ինչպէս ուրիշ ասպարիզում, այնպէս էլ այս խնդրում։ Ֆրանսիական և ռուսական գրականութիւնները աւելի են արձագանքել հասարակական ձայնին, բան, օրինակ, անգլիական և գերմանական գրականութիւնները։ Ազգերի պատմութեան ընթացքը, ներքին պայմանների համագումարը կարող են այս կամ այն ձևը, այս կամ այն առանձնայատկութիւնը տալ իրենց գրականութեան։ Բայց բոլորն էլ—մէկը քիչ, միւսը շատ, մէկը ուղղակի, միւսն անուղղակի—այսպէս թէ այնպէս անդրադարձնում են ժամանակի ոգին և սոցիալական վիճակը։

Հայոց գրականութիւնը — ֆրանսիականին և ռուսականին նման—շատ է զբաղուել հասարակական խնդիրներով։ Ցասնիններորդ դարի մեր սոցիալական բովանդակ կեանքը, կարելի է ասել, ցոլացել է գրականութեան մէջ։ Հասարակական գաղափարներ, հասարակական սկզբունքներ, հասարակական իդէալներ տեղ են գտել այնտեղ բաւական ուղղակի կերպով։ Մեր նորագոյն քաղաքակրթութեան պատմութիւնը, մեր դասակարգերի փոխադարձ յարաբերութիւնները, մեր բարոյական աշխարհահայեացքը, մեր քաղաքական ըմբռնումները—այս բոլորը հանդէս են եկել գրական երկասիրութիւնների մէջ։ Ընկերաբանը այդ գրական յիշատակարանները քննելով, վէպերը, բանաստեղծութիւնները, դրամաները վերլուծելով կարող է բաւականաչափ ճիշտ գաղափար կազմել հասարակական այն բնաշրջման մասին, որ իրագործուեց մեր ժողովրդի կեանքում, վերջին հարիւրամեակի ընթացքում։ Նա այնտեղ կը տեսնէ, թէ ի՞նչպէս է կամաց-կամաց առաջանում հասարակական միտքը, թէ ի՞նչ ազդեցութիւններ է կրում և թէ ի՞նչ ճանապարհ է անցնում։ Նա այնտեղ կը տեսնի այս կամ այն սոցիալական իդէալի, այս կամ այն սոցիալական աշխարհահայեացքի ծագումն ու զարգացումը։

Մեր գրականութեան ուսումնասիրութիւնը ցոյց կը տայ, թէ ժամանակակից մեր քաղաքական, տնտեսական ըմբռնումները ի՞նչ նախնական ձևից են սկզբնաւորուել, ի՞նչ պարզ գաղափարից են մեկնել և ի՞նչ սաղմից են ծագում առել։ Այն, ինչ որ այսօր մեզ նոր միտք է երևում. այն, ինչ որ վերջին տասնամեակի արդիւնք ենք կարծում՝ աւելի հասակաւոր և աւելի հին դուրս կը գան։ Սերունդները միմեանց յետևից — այս կամ այն ձևի տակ, այս կամ այն գունաւորմամբ—հասկացողութիւններ են արտադրել, միմեանց վրայ հաւաքել և իբրև բարոյական մթերք յետնորդ սերնդին կտակեր։ Եւ իւրաքանչիւր ժամանակ, իւրաքանչիւր պատմական շրջան իր առանձնայատուկ կնիքն է դրել գաղափարների վրայ, իր որոշ ձևը, իր անհատական կերպարանքը։ Այսօր, ժամանակակից սկզբունքները պատմական վերլուծութեան ենթարկելով շատ յաճախ նրանց հիմքերը

գտնում ենք մի քանի տասնամեակ առաջ, մեր երախտաւոր հեղինակների երկասիրութեանց մէջ, արտայայտուած այս կամ այն ձևով...

Անցած սերունդները քաղաքակրթական և միաժամանակ հասարակական աշխատանք գործ են կատարել։ Շատ բան մեզ այժմ դիւրին է երևում։ Շատ միտք, շատ գաղափար մեզ այսօր տարրական է թւում։ Բայց այդ տարրական ճանաչածները, նրանք, որոնք մեր բացարձակ գնահատութեան առջև փոքրիկ ու աննշան են կարծւում հիմա՝ պատմական զարգացման ճանապարհի վրայ մեծ կարևորութիւն են ներկայացրել։ Այսօր մեզ համար բնաւ վէճի առարկայ չէ և հայ աշխարհի բոլոր ծայրերում էլ ընդունուած է այն պարզ միտքը, որ նոր գրականութիւնը ժողովրդին հասկանալի լեզուով պիտի գրել, գրաբարի փոխարէն աշխարհաբար պէտք է գործածել... Սակայն այս պարզ ճշմարտութիւնը մարդկանց հասկացնելու համար, սրանից ընդամենը յիսուն տարի առաջ, այնպիսի ճակատագրական պատերազմ է մղել ժամանակի մեր յառաջադէմ երիտասարդութիւնը։ Մի Աբովեան խորապէս ցնցող և եղերականօրէն դառն հոգեբանութիւն ունեցաւ այդ գաղափարի համար։ Մի համոզուած ու տաղանդաւոր վերանորոգիչ, որ հարկադրուած էր արցունքով պաշտպանել նոր լեզուի իրաւունքը։ Մի Նալբանդեան իր երկաթէ տրամաբանութիւնը, իր բազմակողմանի զարգացումը, իր անսահման եռանդը և իր թանկագին տարիները ստիպուեցաւ մեծ մասամբ այդ նպատակի համար գործադրել։ Այսօրուայ սերունդը վայելում է այն բարոյական ժառանգութիւնը, այն նշանակելի յաղթանակը, որի վրայ Աբովեանների ու Նալբանդեանների կեանքն է մաշւել։ Գաղափարները դանդաղ են մտնում ժողովրդային ընդհանուր գիտակցութեան մէջ. սկզբունքները ծանր գնով են հասարակութեան սեփականութիւն դառնում։ Եւ ամեն մի միտք, ամեն մի ճշմարիտ գաղափար, որքան էլ նա ըստ երևոյթին „փոքրիկ“ լինի ու „երկրորդական“՝ այնուամենայնիւ բնաշրջման դժնդակ ճանապարհի վրայ իր պատուաւոր տեղն ունի և իր պատմական նշանակութիւնը։ Այսպիսի փոքրիկ ու երկրորդական գաղափարներով լիքն է տասնիններորդ դարի ռուսահայ գրականութիւնը։ Այդ գաղափարներն են մեծացել, լայնացել և յետագայում մեր կեանքի անգոյն միակերպութիւնը փոխել...

Մեր հասարակական մտքի զարգացման գործում, մեր սոցիալական հոսանքների զտման խնդրում չափազանց ուշագրաւ մասնակցութիւն են ունեցել նախորդ սերունդները։ Եթէ այսօր հայ կեանքի մէջ դուրս են եկել քաղաքական-անտեսական կուսակցութիւններ, արմատական հայեացքներով, յեղափոխական ոգով և ընկերվարական իդէալներով և եթէ նրանք կարողանում են ապրել, դեր խաղալ, կողմնակիցներ ունենալ՝ չպիտի կարծել, թէ այդ բոլորը երէկուանից սկսւեց։ Չպիտի կարծել, թէ այդ կուսակցութիւնները պարտական են միմիայն իրենց ուժերին և ժամանակակից կեանքի անմիջական ազդեցութեան։ Երկար տարիների ընթացքում գրականութեան միջոցով հասարակական աշխատանք է կատարւել։ Տաղանդաւոր ու պայծառատես հեղինակների արտագրած մի վէպը, մի բանաստեղծութիւնը, մի յօդուածը ի զուր չէ անցել։ Նրանք որոշ արժէք են մտցրել կեանքի մէջ, որոշ ազդեցութիւն են ունեցել մտքերի կազմակերպութեան վրայ։ Այն ներքին, մտային գործունէութիւնը, այն հասարակական գիտակցութիւնը, որի մասին խօսեցինք գրականութեան և կեանքի յարաբերութիւնը քննելիս՝ պատրաստւել է և ձևաւորւել երկար ժամանակի ընթացքում։ Նա միայն այսօրուայ ստեղծագործութիւն չէ, միայն ներկայ պայմանների ծնունդ չէ։ Նրա վրայ մեծ երախտիք ունին մի Աբովեան, մի Նալբանդեան, մի Րաֆֆի... Մի քանի սերունդների հաւաքական գործունէութեան հետևանք է նա։

Այստեղ է գտնւում գաղտնիքը այն բարոյական յաջողութեան, որ ունեցան վերջին տարիների արմատական կուսակցութիւնները։ Այստեղ է գտնւում բանալին այն մեծ ժողովրդականութեան, որ բաժին ընկաւ մեր ժամանակի յեղափոխական-ընկերվարական հոսանքին։ Զուտ նիւթական պայմանները և մեր կեանքի առարկայական հանգամանքները—առանց այդ նախնական, գաղափարական աշխատանքի—չէին կարող միմիայն իրենց ներգործութեամբ ծնունդ առ այնչափ ընդարձակ մարմինների և խարիսխ դառնալ այնքան ժողովրդական շարժումների..

Մի շարք յօդուածներով մենք մտադիր ենք ներկայացնել մեր հասարակական մտքի զարգացման շրջանները այնպէս, ինչպէս նրանք երևան են եկել ռուսահայոց գրականութեան մէջ։ Պիտի աշխատենք վեր հանել սոցիալական այն տարրերը, որոնք տեղաւորւել են այս կամ այն գրական երկասիրութեան մէջ։ Պիտի փորձենք որոնել այն հիմքերը, որոնց վրայ կառուցած է մեր ժամանակի սոցիալական աշխարհհայեացքը և վերլուծել այն հասարակական իդէալները, գաղափարները, սկզբունքները, որոնք ցոլացել են արևելեան հայոց գրականութեան մէջ։ Միշտ լաւ է, որ ժամանակակից սերունդը իր նախորդ սերունդների աշխատանքը կարողանայ լաւ տեսնել և արդարութեամբ գնահատել։ Եթէ չլինի սերունդների այս ներքին բարոյական կապը, եթէ չլինի սերունդների հոգեկան-գաղափարական հաղորդակցութիւնը՝ քաղաքակրթութիւնը անիմաստ տառ կը մնայ և յառաջդիմութիւնը անբովանդակ հնչիւն։

Իւրաքանչիւր մի ժամանակ, իւրաքանչիւր մի սերունդ բնաշրջման երկար ճանապարհի վրայ իր գործունէութեան պտուղն է դնում։ Որքան էլ համեստ լինի այդ պտուղը ինքնըստինքեան, առանձին վերցրած՝ այնուամենայնիւ նրանց համագումարն է, որ կոչւում է պրոգրէս...

Մենք կանգ չենք առնի ռուսահայ գրականութեան բոլոր ներկայացուցիչների վրայ։ Այդպիսով մեր աշխատանքը չափազանց կ'ընդարձակւէր և թերևս ծանրաբեռնւէր երկրորդական մանրամասնութիւններով։ Մենք կը ներկայացնենք միայն այն հեղինակների գործերը, որոնք հասարակական մտքի զարգացման ընթացքում հիմնական, կենտրոնական դեր են խաղացել։ Նրանք, որոնք իբրև զուտ գեղարուեստագէտներ առաջնակարգ նշանակութիւն ունին, բայց և որոնք սոցիալական գաղափարների կազմաւորման չեն մասնակցել՝ մեր յօդուածների նիւթ չեն դառնալ։ Բացի այդ՝ չենք կարող խօսել նաև բոլոր այն մատենագիրների մասին առանձին-առանձին, որոնք հասարակական իդէալներ են ցղացել և քաղաքացիական երկեր արտադրել...

Մենք կանգ պիտի առնենք ժամանակաշրջանների վրայ և պիտի ձգտենք իւրաքանչիւր ժամանակաշրջանի ընդհանուր վաստակը վերլուծել։ Եւ եթէ մի հեղինակ կարողացել է իր ժամանակի հիմնական մտքերի ամբողջական արտայայտիչը լինել, իր մէջ խտացնել դարի սոցիալական գաղափարներն ու հասարակական իդեալները՝ մենք, կրկնութիւններից խուսափելու համար, կանգ կառնենք միայն նրա երկասիրութիւնների վրայ և այդպէս կը գծենք ընդհանուր էւոլիւցիան...

Այս բնաշրջան մէջ թերևս կարելի լինի ընդնշմարել այն հիմքերը և աղբիւրները, որտեղից սկզբնաւորւում է մեր ժամանակի այս կամ այն գաղափարը։ Անշուշտ այս պարագան չի կարող նւազեցնել ներկայ սերնդի խոշոր գործը և ոչ էլ ստւեր նետել այն հիմնական նւաճումների վրայ, որ իրականացրել են ժամանակակից քաղաքական-տնտեսական կուսակցութիւնները։ Ընդհակառակը, մեր խորին համոզմունքով, որքան մի աշխարհահայեացք, որքան մի գաղափար պատմական հիմնաւորում ստանայ և օրգանապէս կապւի նախորդ գաղափարների հետ՝ այնքան ամուր կը լինի նա և նրա դերը, այնքան աւելի խորունկ ու նշանակալից։

Մեր ժամանակի կուսակցութիւնները այնքան աւելի կենսունակ, այնքան աւելի ժողովրդական և այնքան աւելի առողջ կը մնան, որքան աւելի պատմական հողունենան իրենց ոտքերի տակ...

„ՍԵՊԱՐԱՏԻԶՄԸ“ ԱԾԽԱՏԱՀՈՐԱԿԱՆ ԾԱՐԺՄԱՆ ՄԷՋ

(ՆԱՄԱԿ ՎԻԷՆՆԱՅԻՑ)

I

Մի նոր երևոյթ է ծայր տալիս Աւստրիայի աշխատաւորական շարժման մէջ, որ արժանի է խորունկ ուշադրութեան։

„Սեպարատիզմի“, ազգային անջատականութեան երևոյթը։

Նրան, ըստ երևոյթին, վերապահւած է որոշ դեր խաղալ այսուհետև ամբողջ միջազգային ընկերվարական շարժման մէջ։ Նա այժմից իսկ անդրադառնում է սոցիալիստական մտածողութեան վրայ նաև Աւստրիայից դուրս, այժմից իսկ բուռն յուզմունք է յարուցանում ընկերվարական միջազգային գրականութեան մէջ։ Նրանով զբաղւեց փոթորկալի նիստերում՝ Կոպենհագի միջազգային Համագումարը. նրանով զբաղւեց, կարելի է ասել, ամբողջապէս նրան նւիրւեց և մօտ անցեալում տեղի ունեցած Ինսբրուկի աւստրիական (գերմանասոցիալիստ) Կուսակցաժողովը։ Վիեննայի աշխատաւորական պաշտօնաթերթը և թէօրիական „der Kampf“ ամսագիրը ամիսներից ի վեր ծեծում են խնդիրը, այժմ էլ ահա հանդէս եկաւ „die Neue Zeit“-ը, Կարլ Կաուցկու մի մեծ յօդւածով, նոյն հրատապ խնդրի առթիւ, որ քանի գնում աւելի և աւելի մտատանջում է սոցիալիստական պարագլուխներին։

Ինչո՞ւմն է խնդիրը։ Ցայտնի է, որ Աւստրիան արևմտեան Եւրոպայի մէջ „դասական երկրի“ հռչակ է վայելում ազգայնական հակամարտութեան և ազգային պայքարների տեսակէտից։ Ցայտնի է և այն — յայտնի էր գոնէ մինչև այս „նոր երևոյթի“ աշխարհ գալը — որ Աւստրիական Սոցիալ-դեմոկրատիան (ընկերվարական կուսակցութիւնը) գտել էր միակ ու լաւագոյն բանալին ազգային յաւիտենական կնճռի լուծման համար, նա հռչակել էր ապակենտրոնացում և ազգերի ինքնօրինութիւն, նա իրականացրել էր նոյն սկզբունքը իր ներքին կազմակերպութեան մէջ։

Եւ նա դրանով մի հրահանգիչ օրինակ էր տալիս ուրիշ, բազմացեղ և բազմալեզու երկիրների ընկերվարական կուսակցութիւններին։

Մինչ, օրինակ, Ռուսաստանի Սոցիալ-դեմոկրատիան (ռուս մարքսիստների կուսակցութիւնը) ծրագրում էր, յեղափոխական ազատ օրերում, ստեղծելու համառուսական կարգերի և մասնաւորապէս աշխատաւորական շարժման համար ամենասերտ կենտրոնացումն, մինչ նա ձգտում էր ամենազօր մի կենտրոնի ղեկավարութեանը մատնել ամբողջ հսկայ կայսրութեան այլացեղ ու այլաբառբառ ժողովուրդների ընկերվարական գործունէութիւնը,—Աւստրիայի սոցիալիստները, աւելի զգաստ, աւելի զարգացած և փորձառու՝ կիրառում էին իրենց այլատարր, խայտաբղէտ միջավայրում ազգային ինքնօրինութեան ու ֆէդերասիոնի (դաշնակցութեան) սկզբունքը, որի համեմատ՝ չեխ, լեհ, ռուսին, իտալացի, գերմանացի և այլ սոցիալիստ մարմինները կազմակերպւում ու գործում են՝ իւրաքանչիւրը իր ազգային-լեզւական միջավայրում, իւրաքանչիւրը անկախ, ինքնագլուխ վարում է իր ներքին պրոպագանդն ու ամբողջ այլազան աշխատանքը, բայց և բոլորն էլ շաղկապւած են մնում փէդերատիվ, դաշնակցական կապերով, ներկայանում են թէ ներքին թշնամու — կապիտալիզմի — և թէ արտաքին աշխարհի առջև՝ իբրև մէկ մարմին, միաբան, համերաշխ, նոյն փրկարար վարդապետութեան դրօշը բռնած, նոյն վերջնական նպատակին ձգտող։

Երբ ազատ օրերի մէջ Հ. Ց. Դաշնակցութեան օրգանները, հրահանգւած կուսակցութեան երկարամեայ ապակենտրոնական դաւանանքից ու փորձերից, մի կողմն էին նետում ռուս սոցիալ-դեմոկրատների այդ վնասակար կենտրոնացման զառանցանքը, մեզ պատասխանում էին — միշտ նոյն սիմպլիստ, պարզունակ պատճառաբանութեամբ — թէ այդ կենտրոնացումը միակ փրկութեան խարիսխն է, թէ նա միայն կարող է ձուլել բոլոր ազգերի պրոլետարիատներին ու սոցիալիստ հատւածներին մէկ միաձոյլ, ամենազօր մարմնի մէջ, թէ նա միայն կարող է ստեղծել բովանդակ Ռուսաստանի մէջ հզօր, ամբողջական ընկերվարական շարժում՝ ընդդէմ քաղաքական և սոցիալական տիրող կարգերի։

Շատ ցաւ էին գնահատում ռուս մարքսիստները ազգայնական պրոբլեմը, նրանք կանգնած էին դեռ 1848-ի „Կոմունիստական մանիֆէստի“ տեսակէտի վրայ. „աշխատաւորը հայրենիք չունի“... Շատ երեսանց էին շօշափում նրանք ազգերի միջև կատարւող դարաւոր հակամարտութիւններն ու վէճերը — հակամարտութիւններ՝ մանաւանդ իշխող և հպատակ, մեծ ու մանր ազգերի միջև... որոնք անխուսափելիօրէն անդրադառնում են նաև աշխատաւոր դասա-

կարգերի հոգեբանութեան վրայ, որոշագրում են յայտնի տակտիկ, գործելակերպ։

Ժամանակը գալիս է միշտ նորանոր ապացոյցներով ն իրագործելու ապակենտրօնացում և ֆէդէրացիա քարոզող կուսակցութիւնների գործելակերպը։

Եւ ահա դարձեալ մի նոր փաստ։

Չեխերի սեպարատիզմը։

Ապակենտրօնական սկզբունքի վրայ կառուցած աւստրիական Սոցիալ-դեմոկրատիան մէկ կէտում միայն պահպանել էր մինչև օրս կենտրօնացում, այն է՝ արհեստակցական կամ սինդիկատային շարժման մէջ։ Մէկ կենտրօնական գանձարան ու բիւրօ և մէկ կենտրոնական վարիչ մարմին՝ ամբողջ Աւստրիոյ համար։ Կենտրօնացումը արհեստակցական գործունէութեան մէջ պատճառաբանւում է նրանով, որ այդպէս շատ աւելի դիւրին կերպով և ազդու կերպով կարելի է մղել ամբողջ Աւստրիոյ աշխատաւոր ընդհանրութեան պայքարը — գործադուլներով, բոյկոտներով և այլն — ամբողջ Աւստրիոյ կապիտալիստ ընդհանրութեան դէմ։

Եւ ահա այստեղ ևս ցցւեց ազգային մշտադալար կնճիռը։ Չեխ սոցիալիստների և աշխատաւորութեան մի մասը անջատւեց համապետական կենտրօնից և իր սոցիալիստական հաւատամքն ամուր շեշտելով հանդերձ՝ յայտարարեց, որ չեխ աշխատաւորների համար ձեռնտու և ցանկալի է՝ կազմակերպել նաև արհեստակցական գործունէութիւնը իրենց ազգային շրջանակներում, թէ նրանք այդտեղ ևս ուզում են լինել ապակենտրօնական։ Եւ նրանք ձեևակերպեցին մի շարք գանգատներ։ Նրանք հասկացրին ի միջի այլոց, թէ չեխ պրոլետարիատի դրամական առատ տուրքերը հաւաստրիական սինդիկատային կենտրոնի գանձարանը թափւելով՝ չեն գործադրւում ցանկալի չափով ու ձևով՝ յօգուտ նոյն չեխ պրոլետարիատի։

Այդ անջատումն էր, որ բաց արեց աւստրիական սոցիալիստների առջև տենդային բանակռիների, վէճերի ու ընդհարումների մի նոր շրջան։

Չեխ պրոլետարիատի դերը և կշիռը ահագին է աւստրիական սոցիալիզմի կեանքում։ Բոհեմիան — չեխերի հայրենիքը — ամենահարուստ արդիւնաբերական վայրերից մէկն է, տակաւին միջին դարերից։ Եւ չեխ աշխատաւորութիւնը իր կրթւած առաջնորդներով, իր ընդարձակ կազմակերպութեամբ և իր կուռ դիսցիպլինով՝ միջազգային սոցիալիզմի լաւագոյն վաշտերից մին է։ Այդ պատճառով և չեխական անջատականութիւնը, սեպարատիզմը այնքան յուզմունք պատճառեց դրսի սոցիալիստ շարքերին։ Նէմէց, չեխ սոցիալիստների պարագլուխը, որ անդամ է Միջազգային Սոցիալիստական Բիւրօի, գլուխ է կանգնած այդ անջատական շարժմանն։ Վերջինը սկսում է արդէն վարակել, տարածւել։ Դա վարակում է Գալիցիայի ռուսիններին։

Ամենից ուժգին զարկում է ահակոչնակը՝ Աւստրիոյ գերմանացեղ սոցիալ-դեմոկրատիան։ Նորածին „սեպարատիզմը“ նա համարում է մի զարհուրելի, աւերիչ վտանգ։ Նոյն ձևով է որակում և Կարլ Կաուցկի։ Ինչպէս որ — ասում է նա — բակունիզմը կործանեց հին Ինտերնացիոնալը, այնպէս և այս սեպարատիզմը կարող է կործանել նոր Ինտերնացիոնալը։

Ամենից առաջ ընկճւած են անակնկալ երևոյթի հանդէպ՝ ծերունի Ադլեր և պերներստորֆեր, որոնք երկար տարիներից ի վեր, իբրև գլխաւոր հիմնադիրներ (մանաւանդ առաջինը) աւստրիական Սոցիալ-դեմոկրատիայի, փայփայել էին այն երջանիկ պատրանքը, թէ իրենք աջողել են, վերջապէս, ստեղծել Աւստրիոյ նման Բաբէլոնում իդէալ-սոցիալիստական կազմակերպութիւնը՝ ազգային և միանգամայն միջազգային հողի վրայ, թէ իրենք աջողել են, վերջապէս, դուրս վտարել սոցիալիստական շարժումների աւազանից ազգայնական բաղխումների ուրուականը և օրինակ տալ աշխարհին ազգայնական կնճիռների ամենադիւրին լուծումով...

Ի՞նչ է աստառը այս նոր հերձւածի և ինչպէ՞ս են պատճառաբանում հակամարտ կողմերը — մենք այդ մասին հանգամանօրէն կը խօսենք „Դրօշակ“-ի առաջիկայ համարի մէջ, աշխատելով — ինչպէս ամեն ուրիշ պարագայում — կանգնած մնալ օբ'եկտիվ դիտողի դիրքում։ Իբրև խնդիրը եկաւ Կոպենհագի Համաժողովի առջև՝ մենք ձեռնպահ մնացինք ֆինլանդացի սոցիալիստների հետ, մինչ գրեթէ ամբողջ Ինտերնացիոնալը դատապարտեց չեխ սոցիալիստների ու աշխատաւորութեան անջատումը և նրանց ազգային ինքնօրինութեան պահանջը սինդիկատային գործունէութեան մէջ։ Եւ դրան ի պատասխան՝ չեխերը յայտնեցին մի ծանր մեղադրանք — թէ Ինտերնացիոնալի վճիռների մէջ՝ տոն են տալիս և ճնշող դեր են կատարում մեծ ազգերը...

Բացատրե՞լ արդեօք նոր երևոյթը՝ չեխ սոցիալիստների հերձւածամոլ ոգով ու նեղմիտ ազգայնամոլութեամբ, շովինիզմով։ Այդպէս են մտածում շատ շատերը։ Դժւար թէ, սակայն, հնարաւոր լինի լիովին ու արդարամիտ բացատրութիւն տալ լոկ միայն այդ պատճառաբանութեամբ։ Հարկ է փոքր ինչ ծանօթանալ իրողութեան հետ։

Ցամենայն դէպս այդ վշտաւորիթ փաստը, որ այսօր ուժգնօրէն ալէկոծում է սոցիալիստական կեանքը աւստրիական կայսրութեան մէջ, որ վաղը թերևս կ'ալէկոծէ բովանդակ Ինտերնացիոնալը — դա մի նոր ապացոյց է՝ թէ որքան կենսունակ, յամառ ու տոկուն է ազգայնական համայնակեցութեան բնազդը, թէ որքան նա ուժեղ է դասակարգային զգացումներից և թէ որքան, հետևապէս մոլորւած էին, ուտոպիստ էին մարքսիզմի հիմնադիրները և նրանց մոլեռանդ յաջորդները, երբ տասնեակ տարիներ առաջ, փիլիսոփայական անդորր ու վարդագոյն ներշնչումով գուշակում էին ազգային խտրութիւնների մօտալուտ անհետացումը տիեզերական թատերաբեմից և հռչակում էին բանւոր-պրոլետարներին իբր միանգամայն „ազատագրւած“ ազգայնական կուռքերի պաշտամունքից, միանգամայն համաշխարհայնացած, ապազգայնացած... „Բանւորները հայրենիք չունին“. *Ubi bene, ibi patria...*

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

—

„Անակնկալները“ պէտք է միշտ հաշուի առնել պատմական էւոլիւսիոնի մէջ։ Երկար, անդուլ, ստորերկրեայ աշխատանքից ու քնաշրջումից յետոյ, իբրև հետևանք

այդ բնաշրջման և ոչ իբրև հրաշք, պատահար՝ մեկէն ի մեկ դուրս են ժայթքում Նրանք—այդ հսկայ, ուրախառիթ „անակնկալները“—և խարխլում, սասանեցնում են հնութեան ու փտութեան կառուցուածքը...

Ահա Զինաստանը հանրապետական... և ահա 110 սոցիալիստ, ընկերվարական՝ Գերմանիայի ազգային Պատգամաւորական Ժողովի մէջ—Ռայխստագում։ Պատգամաւորների ընդհանուր թիւը 397 է, և ուրեմն գրեթէ մի երրորդ մասը կազմում է ընկերվարական կուսակցութիւնը...

Գրիդրիխ Էնգելս մարգարէացել էր անցեալ դարու 90-ական թուականներին—սոցիալիզմի սրարշաւ առաջխաղացութեան հանդէպ—թէ ընկերվարական հասարակակարգը պիտի գայ շուտով, շատ շուտով, մինչև 20—25 տարին։ Միամիտ պատրանքը մեծ տեղ ունէր, ի հարկէ, այդ հապշտապ մարգարէութեան մէջ. սակայն իրաւ է, որ սոցիալիստական իդէալի իրագործումը գուցէ շատ էլ հեռու չէ... Ո՞վ գիտէ, գուցէ մենք կը տեսնենք ձեզ հետ, ընթերցող։

Սոցիալիզմի վերջին յաղթանակը Գերմանիայում մի ահագին իրողութիւն էր, որ ցնցեց ամբողջ բուրժուազական մարդկութիւնը։ Գերմանական սոցիալ-դեմոկրատիան արել էր մի քանի անգամ հսկայ և հպարտ թռիչքներ, բայց այսպիսին չէր եղած։ Ոչ ոք, ոչ իսկ խանդավառ ու լաւատես Բեբելն ու Կաուցկին կարող էին գուշակել այսպիսի աջողութիւն։ Գիտէին, որ դժգոհութիւնը խուլ որոտում է գերմանական ժողովրդի տմեմնալայն խաւերի մէջ։ Գիտէին, որ Վիլհելմի ձախողակ, միապետական ոստիւնները և կանցլերի անկարող, պահպանողական ընթացքը նետել էր զանգուածները դէպի ձախ, բայց այս աստիճան—չէին կարող նախագուշակել։

Մօտ 14 միլիոն ընտրողներից—գրեթէ $4^1/_2$ միլիոնը սոցիալիստ։ Այդ թիւն է իսկական չափանիշը և ոչ սոցիալիստ պատգամաւորների քանակը պարլամենտում։ Իսկ այդ թիւը, սոցիալիստական ընտրողների թիւը, աճում է միշտ, աճել է շարունակ, անընդհատ, սկսած 1870-ից։ Եւ եթէ տիրէր հաւասարական ընտրութեան սիստեմ՝ սոցիալիստ պատգամաւորների թիւը շատ աւելի մեծ կը լինէր։

Ահա մի իրողութիւն, որ չափազանց պերճախօս է։ Եւ, սակայն, իշխողները տակաւին օրօրւում են պատրանքով՝ թէ ընկերվարական հոսանքը յարատև չէ, թէ նրանք վաղ թէ ուշ պիտի կարողանան յաղթահարել կարմիր հիդրան... Վերջին ահարկու յաղթանակների դիմաց՝ բուրժուազիայի և պահպանողականութեան օրգանները սփոփում են իրենց, յայտարարելով՝ թէ այդ միլիոնաւոր ձայները սոցիալիստ չեն, այլ սոսկ դժգոհներ արդի կարգերից, սոսկ մոլեգնոտ ցուցարարներ միապետական ու կղերական ռեժիմի դէմ։ Նրանք պնդում են—ոմանք բուռ, ուրիշները կեղծ, շինծու միամտութեամբ—թէ սոցիալիզմի այդ վիթխարի յորձանքը վերագրելի է կանցլերի (նախարարապետի) անընդունակ ու անշնորհք քաղաքականութեան, թէ յորձանքը յետ կը նահանջէ, սոցիալիստ ընտրողների թիւը կը նւազէ՝ երբ Բեթման-Հոլվեգի տեղ վերստին կը բազմէ նախկին կանցլերը—Բիւլով։

Ի՞նչ էր արել այդ Բիւլովը։ Երկար տարիների իր մինիստրութեան միջոցին թափել էր քափ ու քրտինք, դիմել էր ամեն տեսակ հնարքների՝ ընկերվարութեան ուժերը խորտակելու համար։ Նա գլուխ էր բերել հրաչակաւոր „բլոկը“, կազմած այլազան, հակամարտ տարրերից՝ պահպանողականներից և ազատական լիբերալներից։ Նա ձգտել էր այդ տարամերժ բլոկի միջոցով մահացու հարուածներ տալ մի կողմից կարմիր սոցիալ-դեմոկրատիային, միւս կողմից՝ կղերական կենտրոնին *) Նա ձգտել էր որոշ չափով „մոդեռնացնել“ Պրուսիոյ պահպանողական իւնկերութիւնը, մօտեցնել այն Անգլիայի տորիներին, հարկադրել՝ ընդունելու գէթ մի քանիսը ժամանակակից քաղաքակրթութեան և յառաջդիմութեան նշանաբաններից... Այդպէս էր նա կամենում հաշտեցնել կոնսերվատիզմը լիբերալիզմի, ազատականութեան հետ և այդպէս էր նա ձգտում պահպանել բլոկը։ Սակայն, նրա ջանքերը խորտակուեցին։ Գերմանիայի պահպանողական հատուածը ցոյց տուեց ինքզինքը, որպէս միանգամայն յետամնաց, քարացած մի էութիւն, որ բնաւ առնչութիւն չունի արդի քաղաքակրթութեան պահանջների հետ։

Ապահարզանը անխուսափելի էր երկու հակամարտ դաշնակիցների—իւնկերների և ազատամիտների—միջև, և նա պայթեց առաջին խոշոր առիթով։ Բիւլովի կառավարութիւնը ծրագրեց մի շարք նոր տուրքեր, որոնց թւում և ժառանգութեան տուրքը (*Erbschaftssteuer*)։ Պահպանողականները կատաղաբար ըմբոստացան այդ ծրագրի դէմ և մանաւանդ ժառանգութեան տուրքի դէմ, որը պէտք է ծանրանար նրանց վրայ։ Եւ քանի որ այդ հողի վրայ համաձայնութեան բլոկը չէր կարող այլ ևս յարատևել, ուստի պահպանողական կուսակցութիւնը երես դարձրեց լիբերալներից և կազմեց մի նոր բլոկ՝ կղերական Կենտրոնի հետ, որը նոյնպէս հակառակ էր նոր տուրքերին, քանի որ նա ևս խոշոր հողատէր ու արտոնատէր դասակարգերի ներկայացուցիչ է պարլամենտում։ Տապալեց Բիւլովի հարկային նոր ծրագիրը և պարլամենտի նոր պահպանողական-կղերական մեծամասնութիւնը մշակեց նրա փոխարէն իր սեփական ծրագիրը... Նա պահանջում էր փոխարինել ժառանգութեան տուրքը մի շարք անուղղակի հարկերով (լուցկիի և այլ տարրական պէտքերի վրայ), որոնք ինչպէս յայտնի է, իրենց աւերիչ ծանրութեամբ ընկնում են աշխատաւոր և չքաւոր դասակարգերի վրայ։

Այդ աղաղակող անարդարութիւնը իր դերն ունեցաւ, անտարակոյս, վերջին ընտրութիւնների միջոցին։ Այն օրերից ի վեր Գերմանիայի ճակատագիրը գտնւում էր այդ „սև-կապոյտ“ բլոկի ձեռքին (*der schwarz-blaue-Block*, այդպէս են որակում կղերական-պահպանողական դաշնակցութիւնը)։ Իշխան Բիւլով ի վերջոյ հրաժարական տուեց, նրա տեղն անցաւ Բեթման-Հոլվեգ, մի մարդ, որ իր մտայնութեամբ կատարելապէս համապատասխանում էր Ռայխստագի յետադէմ մեծամասնութեան։ Եւ դա եղաւ Գերմանիայի ամենատխուր, ամենապահպանողական պարլամենտներից մինը։

Թագակիր ֆանֆարոնը ևս քիչ դեր չխաղաց այդ յետաշրջման պրոցէսի մէջ։ Նա սիրում է ըստ առաջնւոյն միապետական հովեր առնել, իբրև համոզած խնկարկու

*) *Zentrum*, կաթոլիկ, հին և ուժեղ կուսակցութիւններից մինը Գերմանիայում, իր էութեամբ հակառակ ժամանակակից գաղափարների ու իրաւակարգի։

„անձնական ռէժիմի“. և երբեմն խիզախում է նոյնիսկ դուրս գալ իր պաշտօնական սահմաններից. այդպէս եղաւ 1909-ի նոյեմբերին, երբ Վիլհելմ II-ի մի շարք բացբերան, վտանգաւոր յայտարարութիւնները — անգլիական մի նշանաւոր օրագրողի հետ տեսակցութեան միջոցին — փոթորիկ յարուցեց ամբողջ Գերմանիայում, պարլամենտը և հանրային կարծիքը ցասումով ծառացան սանձարձակ միապետի դէմ և ստիպեցին նրան խոնարհուել երկրի կամքի առջև...

Ահա մի շարք պատճառներ, որ առատօրէն սնունդ աւին գերմանական ժողովրդի առանց այն էլ խոր դժգոհութեան և մղեցին նրան զանգուածօրէն դէպի ձախ, դէպի սոցիալիզմ...

Այսօր, կարելի է ասել, ճանապարհը հարթուած է, վերջապէս, գերմանական պարլամենտարիզմի անկշանդ առաջադիմութեան համար։ „Պարլամենտարիզմ“, բառի իսկական նշանակութեամբ դեռ ևս չկայ Բիսմարկի հայրենիքում, թէև կայ այնտեղ ընդհանուր ընտրողական իրաւունք։ Նախարարապետը, կանցլերը, որ ղեկավարում է ամբողջ ներքին և արտաքին քաղաքականութիւնը՝ ընտրւում է թագաւորի ձեռքով և ոչ պարլամենտի։ Ուրիշ արևմտեան երկիրների մէջ, այսպիսի ընտրութիւններից յետոյ, այսքան ուժեղ մի ապտակ ստանալուց յետոյ՝ նախարարապետը անմիջապէս կը հրաժարուէր իր պաշտօնից և տեղ կը տար ժամանակի ոգուն աւելի համապատասխան մէկին։ Սակայն... Գերմանիան դեռ այդ աստիճան չի հասունացել...

Այնուամենայնիւ հարուածը, որ հասցրին ընտրութիւնները պետական հին կառուցուածքին՝ ահագին է, անբուժելի։ Գերմանիան, յիրաւի, դարձաւ „կարմիր պետութիւն“, մի շարք խոշոր կենտրոններ անցան սոցիալիստների ձեռքը. Կ ե օ լ ն ը, գերմանական կղերականութեան Հռոմը, որ 40 տարուց ի վեր ընտրել էր միշտ կղերական պատգամաւորներ, այսօր գտնւում է սոցիալիզմի տիրապետութեան տակ։ Մայրաքաղաք Բերլինը գրեթէ ամբողջապէս — դարձեալ սոցիալիստներին է... Իսկ Վիլհելմ Լիբկնեխտի որդին, սոցիալիստ Կարլ Լիբկնեխտ ամուր հաստատուեց արքայանիստ Պոտսդամում։ Վերընտրուած են հսկայական մեծամասնութեամբ ընկերվարական հռչակաւոր պարագլուխները՝ Բեբել, Ֆոլլմար, Մոլկենբուր, Բերնշտայն և ուրիշներ։

Մի եզակի յաղթանակ, որ կունենայ լայն, համաեւրոպական անդրադարձումներ։ Ռուսաստանից յետոյ՝ Գերմանիան պահպանողականութեան ու ֆէոդալիզմի ամենամուր բերդն է Եւրոպայում։ Զը նայեած մի շարք ազատութիւններին ու հիմնական ռէֆորմներին, չը նայեած տնտեսական վիթխարի առաջխաղացութեան և բուրժուազիայի անասելի հարստացման՝ այդ երկրի ճակատագիրը մինչև օրս վարում են միջնադարեան խոշոր հողատէր աւատականները, այսպէս կոչուած ի ւ ն կ ե ր ն ե ր ը։ Նրանց ձեռքն է քաղաքական իշխանութիւնը, Նրանցից է ձուլւում ամբողջ բարձր պաշտօնէութիւնը, բիւրօկրատիան, նրանք են տալիս և մինիստրների, դեսպանների, ամեն տեսակ դրտօնաւոր պաշտօնների հազարաւոր թեկնածուներին։ Բ ա ն ա կ ը ևս իր բաքձրագոյն հրամանատարներով, իր ամբողջ սպայակոյտով՝ կազմւում է իւնկերներից։

Դա մի հրէշաւոր տարկանոնութիւն է. և վերջին ընտրութիւնները, սոցիալիզմի և ամբողջ ձախակողմի յաղթանակը եկաւ վերացնելու այն։ Այդ ձախակողմը — սոցիալիստ, արմատական (fortschrittlich) և ազգային-ազատական (national-liberal) — թէպէտ և ներքուստ ոչ համատարը ու միաբան՝ պիտի կարողանայ այնուհետև իր կնիքը դնել երկրի քաղաքականութեան վրայ, իբրև պարլամենտական մեծամասնութիւն (205 ընդդէմ 192-ի)։ Եթէ նա առժամապէս չկարողանայ դրական, խոշոր բարենորոգումներ մտցնել, յամենայն դէպս ընդունակ կը լինի արգելելու, չեզոքացնելու յետախաղաց հսսանքները, սանձահարելու միապետական իւնկերների և կղերի միջնադարեան ախորժակները։

Գերմանիայի ռամկավարացումը ուժգնապէս կ'անդրադառնայ միջազգային յարաբերութիւնների վրայ, կը նւազեցնէ պատերազմի վտանգները, որոնց առատ սնունդ է տալիս Վիլհելմ II-ի կամարիլլան, կ'ազդէ մասնաւորապէս ֆրանս-գերմանական յարաբերութիւնների վրայ, կը նպաստէ թերևս աւելի մարդասէր քաղաքականութեան՝ օսմանեան Արևելքում, կ'անդրադառնայ, վերջապէս — անուղղակի — նաև հիւսիսային բռնապետութեան ճակատագրի վրայ... Որքա՜ն յաճախ, մահացու տագնապների միջոցին, Նիկոլայ II-ը դիմել է իր հզօր եղբայրակցի, Վիլհելմ II-ի խորհուրդներին ու աջակցութեան...

Աշխարհը գնում է — հպարտ, անսասան — դէպի բաղձալի ժ ո ղ ո վ ր դ ա պ ե տ ո ւ թ ի ւ ն... Էլբայի նզերքներից մինչև հեռաւոր Զինաստանը՝ քաղաքական երկնակամարը միշտ աւելի շառագունում է, պայծառանում և նրա վրայ նկարւում է հսկայական, եռագոյն ծիածանը՝ Ֆրանսիական Մեծ Յեղափոխութեան հռչակած երեք խոշոր նշանաբաններով՝ Ա զ ա տ ո ւ թ ի ւ ն, Հ ա ւ ա ս ա ր ո ւ թ ի ւ ն և Եղ բ ա յ ր ո ւ թ ի ւ ն...

ՄԱՄՈՒԼ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

«ԱՍԱՆՈՂ»Ն ՕՐԳՈՆ Եւրոպայի Հ. Յ. Դ. Ազատագրական Միութեան № 6.

—

Ասանողութիւնը, ի դէմս իր լաւագոյն տարրերի, շարունակում է ամենուրեք իր աւանդական կոչումը՝ լինել բոլոր գաղափարական շարժումների առաջապահ շարքերի մէջ։ Թէ գործնական թռիչքների և թէ տեսական մտքի մշակութեան մէջ՝ համալսարանական տարրը իր պատկառելի տեղն ունի, — մասնաւորապէս սահմանադրութեան ու ազատութեան համար պայքարող երկիրներում՝ Ռուսաստանում, Լեհաստանում, Կովկասում, Պարսկաստանում, անգամ հեռաւոր Զինաստանում։

Ռուսաստանի մէջ զինադադար է և հրապարակը նորէն գրաւոր ու բանաւոր պրոպագանդին է։ Վեց տարի առաջ շղթայազերծուած հսկայ փոթորիկը սահմանադրութեան, ազատութեան և հողերի համայնացման նշանաբաններով՝ փիժեց, սակայն վերջնականապէս չխորտակուեց։ Գետնայարկերում, խուլ, հեռաւոր գաւառներում, անգամ բացարձակ հրապարակօրէն, օրինական հաստատութիւնների մէջ, երբեմն նոյնիսկ Պետական Դումայում՝ նոյն նշանաբանները, նոյն ազատարար փոթորիկը որոտում է պարբերաբար խելակորոյս բռնա-

կալութեան ականջներին և անտարակոյս, հեռու չէ ժամանակը, երբ երկկեան յաղթուածը պիտի տանէ իր յաղթանակը։

Շարժումը կտրատուում է — ճակատագրական մի երևոյթ, տարաբախտաբար։ Կուսակցութիւնները մեկուսանում են, իւրաքանչիւրը իր տաճարի մէջ, մի տեսակ աղանդական նախանձախնդրութեամբ և երբեմն թուում է ձեզ—նրանց բայքայուն, անփառունակ վիճակի հանդէպ—թէ տակաւին շատ երկար պիտի սպասենք մինչև նոր գարուն։ Սակայն, կուսակցութիւնները ամբողջ կեանքը չեն։ Նրանք յաճախ հանդիսանում են իբրև մի տեսակ շրջանակներ, որ սահմանուած են ընդունելու, պարփակելու, ձևաւորելու գալոց բնական, տարերային ժայթքումները, որ պիտի արտադրէ ինքը կեանքը։ Հ. Յ. Դաշնակցութիւնը համեստ ուժ էր Ռուսաստանում, նախ քան 1903—905—906-ի փոթորկալի անցքերը։ Բայց այդ համեստ ուժը իր համեմատաբար անձուկ շրջանակներով դարձաւ շուտով Ռուսաստանի ազատագրական հոսանքի պատկառելի ճիւղերից մինը։ Նա ազդեց իր հայրենի կեանքի վրայ, բայց աւելի ևս ազդեց նրանից։ Նա զարկ տուեց բողոքի ու ըմբոստացման շարժումներին և շուտով ինքը կեանքը իր հզօր ու անգիմադրելի ժայթքումներով, այսպէս ասած, գերազանցեց կազմակերպութիւնը. նրա անձուկ շրջանակները ձգուեցին, լայնացան, ընդունելով իրենց մէջ—յանուն մեծ, ժողովրդական, ազատարար գաղափարի — նորանոր զանգուածներ, երիտասարդութիւնն ու մտաւորականութիւնը, ամբողջ տանջուող ու պայքարող ժողովուրդը։

Տխրալի է, անտարակոյս, կուսակցական ուժերի պառակտումն ու մշտական հակամարտութիւնը, բայց նա բնաւ յուսահատեցուցիչ չէ։ Ժամը կը հասնի, երբ արթնացող կեանքի տարերային թափերի տակ՝ այդ վտիտ, բայքայուն կազմակերպութիւնները,—ս.-դ.-ականը, ս.-դ.-ականը և ուրիշները —նորէն կը դառնան մի մի ահարկու իրաւարարներ և կացութեան հրամանատարներ։ Առայժմ նրանք վերակազմւում են, մաքրագործուում և ոյժ են տալիս պրօպագանդին։ Գաղտնի անկէգալ գրականութիւնը նորէն ահագին ծաւալ է առնում։ Սկզբունքների, ծրագիրների վերաքննութիւն, երկրի անցեալի ու ներկայի ուսումնասիրութիւն, վիճաբանութիւններ տեսակէտների, աշխարհայեացքների և պայքարի մեթոդների շուրջը —այդ բոլորը վերստին տիրում է հրապարակին։

Հ. Յ. Դաշնակցութիւնը սկզբից ի վեր եղել է այն միակ կազմակերպութիւնը, որ անձնատուած կենդանի գործի, մշտնջենական տենդային կռուի մտահոգութիւններին՝ ամենից քիչ է զբաղուել գրաւոր և մանաւանդ տեսական պրօպագանդի խնդիրներով։ Դա եղել է նրա ուժը և թուլութիւնը։ Վերջին տարիներս, կուսակցութիւնը աշխատում է որոշ գոհացում տալ և այդ զգալի կարիքին։ Դարձեալ, անշուշտ, կազմակերպութեան մտաւոր ուժերի ահագին մեծամասնութիւնը հարկադրուած է նիւթուելու գործնական կեանքի ցաւոտ անհրաժեշտութիւններին, բայց այլ ևս չկայ նախկին թեթև, փոքր ինչ արհամարհոտ վերաբերմունքը դէպի տեսական խնդիրները,—ևս առաւել, որ այդ կարգի խնդիրներով սկսում է հետաքրքրուիլ և տաքանալ անգամ Թիւրքահայ մտաւորական երիտասարդութիւնը։ Վերջին Ընդհանուր Ժողովն ևս շեշտեց այդ կարգի խնդիրների արծարծման անհրաժեշտութիւնը։

Եւրոպայի „դաշնակցական“ ուսանողութիւնը մի երկու տարուց ի վեր ստանձնել է նախանձելի պաշտօն՝ իր ուժերի չափ նպաստելու կուսակցութեան որդեգրած գաղափարների մշակութեան։ Եւ նա տանում է իր գործը գոհացուցիչ ձեռնհասութեամբ։

Ուսանողական նախկին մարմինը, որի սկզբնական կորիզը կազմակերպւել էր 1897-ին Հայդելբերգում, չէր կարող ապրել աւելի երկար և լուծուեց։ Նա կատարել էր մի յայտնի գործ, դրուատելի և անհրաժեշտ գործ։ Հայոց պատմութեան ամենամռայլ շրջանում—Թիւրքահայաստանի տագնապի միջոցին—նա նուիրուել էր հայկական դատի պրօպագանդին Եւրոպայի մէջ, առանց կուսակցական խարութիւնների, առանց ներքին հակամարտութեան։

Այդ խարութիւններն ու հակամարտութիւնը Եւրոպայի Հայ Ուսանողութեան ծոցում ուժով շեշտուեցին Ռուսաստանի յեղափոխական շարժումներից յետոյ։ Հայոց կեանքի հրապարակում խիստ որոշ գունաւորութեամբ երևան էին եկել կուսակցութիւնները և այդ իրողութիւնը, բնականաբար, պէտք է անդրադառնար ամենազգայուն տարրի՝ ուսանողութեան վրայ։ Հերթական Համագումար-ժողովի մէջ կատարուեց անխուսափելի պառակտումը, ուսանողութեան այլազան տարրերը մնացին ցիր ու ցան, անկազմակերպ, մինչդեռ „Դաշնակցութեան“ը յարող տարրերը շարունակեցին իրենց ուրոյն կազմակերպուած գոյութիւնն ու գործունէութիւնը „Եւրոպայի Հ. Յ. Դ. Ուսանողութիւն“ անուան տակ և ունեցան այնուհետև մի շարք տարեկան համագումարներ։

Այդ միութեան օրգանն է ահա՝ „Ուսանող“ը։ Մեր առջև դրուած է նրա № 6ը, 263 էջից բաղկացած, աւելի ճոխ և բազմակողմանի, հետաքրքրական, քան նախորդ համարները։ Լեզուն ևս բաւականաչափ յղկուած է, զերծ օտար ու դժուարամարս բառերի ու դարձուածների կուտակումներից. կարդացւում է ընդհանրապէս դիւրութեամբ ու հաճութեամբ. տպաւորութիւնը միանգամայն գոհացուցիչ է։

Ի՞նչ է „Ուսանող“ի նպատակը։ Նա պարզուած է փոքրիկ նախաբանում.

„Յենուած դաշնակ. գաղափարական ուսանողների գիտակցութեան վրայ, նա սրանից յետոյ ևս — և աւելի ընդարձակօրէն—պիտի ջանայ պարզաբանել Հ. Յ. Դաշնակցութեան հիմնական սկզբունքները, ուսումնասիրել հայկական միջավայրի կարիքները և ընթերցողներին տեղեակ պահել միջազգային աշխատաւորութեանն առաջնորդող սկզբունքների ու գաղափարների յաղթանակներին։

„Ուսանող“ը կունենայ նաև գրական բաժին, որտեղ ց'արդ հրատարակուած մատենախօսութիւններից բացի, կը հրատարակուին ընկերվարական գրական երկեր—լինի ինքնուրոյն թէ թարգմանական—աշխատելով հնարաւոր չափով զարկ տալ այդ նոր հոսանքին, հակադրել ընկերվարականը՝ բուրժուականին և գրական գեղարուեստական տարբեր հոսանքների քննադատական տեսութիւններով ջանալ

ամրապնդել իր տեսակէտները, մատնանշելով տիրող գրական հոսանքների վնասակար կամ օգտակար ազդեցութիւնը։

„Գիտակ մեր պարտականութեան, մեր համեստ ուժերի չափով պիտի աշխատինք օգտակար լինել՝ թէ մեր փայփայած կուսակցութեան և նրա հետ միասին բովանդակ աշխատաւորութեան և թէ գիտական հետաքրքրութիւն ունեցող հայ մտաւորականութեան“։

Խիստ շահեկան նիւթ է ընտրել ընկեր Արտուրը. „Ինտելիգենցիան և կուսակցութիւնը“։

Ճիշտ մտքեր շատ կան այդ յօդուածի մէջ և իրաւամբ հեղինակը խարանում է անկուսակցականութեան տխուր, անհեթեթ երևոյթը ինտելիգենտաշխարհում, շեշտելով կուսակցականութիւնը իբրև գրական, անխուսափելի և արգասաւոր անհրաժեշտութիւն։ Լաւ է անում մեր ընկերը, զատելով „ինտելիգենցիա“ (մտաւորականութիւն, կրթուած տարր) ընդհանուր հասկացողութիւնից՝ „գաղափարային ինտելիգենցիայի“ իմաստը ըստ ռուսական սովորութեան։ Ճշմարիտ մտաւորականութիւնը „ժողովրդական գործին ծառայող մասն է“։ Ռուսները Լավրովից ի վեր ընդունել են իբրև ոլոշումն այդ ճշմարիտ ինտելիգենցիայի՝ „քննադատօրէն մտածող տարրը“։ Դա, թերևս՝ աւելի իրապատշաճ որոշումն է։ “Գաղափարական“ ստորոգելին, սակայն չպէտք է նոյնացնել „քաղաքական“ին և „կուսակցական“ին։ Ռուսաստանի, ինչպէս նաև բոլոր երկրների պահպանողական մտաւորականութիւնը նոյնպէս ունի քաղաքական և կուսակցական բնոյթ, սակայն չի կարելի նրանց ևս ընդունել, իբրև գաղափարական և մանաւանդ „ժողովրդական գործին ծառայող“ մտաւորականութիւն։

Զենք կարող նաև համաձայնուել մեր ընկերոջ հետ, երբ նա հակադրում է մասսան (զանգուածը) և ինտելիգենցիան, շեշտելով, որ իբր թէ մասսաներին դրդողը քաղաքական պայքարների մէջ գրեթէ միայն „կօնկրետ շահն“ է, մինչդեռ գաղափարական ինտելիգենցիային „մղում է գաղափարը“։ Իրաւ է անշուշտ, որ ժողովրդային զանգուածները առհասարակ չեն ցոյց տալիս մեծ գիտակցութիւն—այդպէս է եղել մանաւանդ անցեալում—սակայն ճիշտ է և այն, որ այդ զանգուածները յաճախ վառուել, ըմբոստացել են՝ ոչ սոսկ նիւթական շահից դրդուած՝ այլ յանուն մի բռնաբարուող գաղափարի, հայրենիքի ու հայրենասիրութեան, կրօնի, լեզուի, եկեղեցու... Պատմութեան մէջ անուրանալի են այդ վայրկեանները։ Նոյնիսկ մեր մօտիկ անցեալի փոթորիկների մէջ—եկեղեցական գոյքերի յափշտակութեան միջոցին—մեր ժողովրդի հոգեբանութեան ու մտայնութեան մէջ որոշ դեր ունէր այդ գաղափարային, իդէոլոգիական մօմենտը։

Միւս կողմից՝ գաղափարական ինտելիգենցիայի մի մասը—այսպէս կոչուած ինտելիգենտ պրոլետարիատը (ուսուցիչներ, գրողներ, մանր-մունր պաշտօնեաներ, հասարակական այլ և այլ գործիչներ) նետւում են սովորաբար քաղաքական կուսակցութիւնների ու շարժումների մէջ՝ դրդուած ոչ միայն գաղափարից, այլ և նիւթական թշուառութիւնից, „ստամոքսային“ շահերից։ Շահն ու գաղափարը դժուար է այդպէս բացարձակ ձևով իրար հակադրել—նրանք խճողւում են, հիւսւում անբաժանելի և անշմարելի կերպով պատմութեան խորունկ պրոցէսի մէջ։ Մի տեղ մէկն է գերակշռում, մի այլ տեղ միւսը։ Եթէ կարելի է գաղափարը ճանաչել իբրև միակ շարժիչ ուժ որևէ հասարակական կատեգորիայի, եթէ կան մարդիկ, որոնք գլխակորոյս, à corps perdu, նետւում են սոցիալական ու քաղաքական մրրկածուփ յորձանքները, այրում են բոլոր նաւերը իրենց ետևից, հրաժարւում են իրենց դիրքի ու դասակարգի արտօնած վայելքներից, իրենց գրկած գաղափարի հրամայական թելադրութեամբ, եթէ կան անհատներ, որոնց մէջ ոչ միայն նիւթական ակնկալութեան, այլ և փառքի ու եսի ամեն տեսակ մտահոգութիւններ նսեմանում, հալւում են գաղափարի բոցավառող ու հրդեհող ճառագայթներում—նրանց մէջ են, անտարակոյս, համեմատաբար փոքրաթիւ այն երջանիկները—Բակունիններ, Լավրովներ, Պրեսսանսէներ — որոնք իջնելով բարեկեցիկ դասակարգերից, գրկում են խանդավառութեամբ աշխատաւոր ու չքաւոր ժողովուրդների դատը և պատրաստ են ամեն վայրկեան զոհաբերելու արդարութեան ու հաւասարութեան յաւիտենական գաղափարի համար։

Եւ նրանք չեն, ի հարկէ, միակ երջանիկները։ Բոլոր դասակարգերի մէջ, բոլոր երկրներում, պատմութեան բոլոր դրւագներում դուք կը հանդիպէք այդ գործիչներին, որոնց գերագոյն շարժիչ-լծակը Գաղափարի շահն է, նոյնպէս „կօնկրետ շահ“... Կը հանդիպէք այդ մաքուր գաղափարականութեանը՝ թէ ընտիր, նրբաբարոյ, ապադասակարգային ինտելիգենցիայի և թէ կոպիտ մասսայի մէջ։

Կարելի է ընդհանուր առմամբ ճիշտ համարել ընկեր Արտուրի այն միտքը՝. թէ յետամնաց երկրներում ինտելիգենցիան շատ աւելի բարձր է մասսայից, թէ երկուսի հակադրութիւնը շատ աւելի խորն է, քան առաջաւոր, քաղաքակիրթ ազգերի մէջ... Թէև, օրինակ, ժամանակակից Թիւրքական ինտելիգենցիան իր մտայնութեամբ շատ էլ տարբեր չէ մահմեդական զանգուածներից (մի կողմն ենք թողնում անհատական բացառութիւնները)։

Բայց չենք կարող ընդունել մեր ընկերոջ այն թեզիսը, որով նա յայտարարում է, թէ „գաղափարական կամ քաղաքական ինտելիգենցիան“ աւելի զօրաւոր է յետամնաց երկրներում, քան Եւրոպայում, թէ արևմտեան ազգերի մէջ նրա թափը թուլանում է, թէ նա ընկնում է մասսայի վիճակի մէջ... *Affirmation trop absolue!* Ճշտը—շատ է բացարձակ և վճռական։ Եթէ նոյնիսկ ճիշտ լինէր, թէ այժմեան Ռուսաստանի գաղափարային ինտելիգենցիան իր թափով ու պայքարի տենդով բարձր էր դիցուք Ֆրանսիայի գաղափարական ինտելիգենցիայից, դարձեալ անկարելի էր այդպիսի ընդհանրացումն անել և տարածել իրողութիւնը բոլոր յետամնաց երկրների վրայ։ Բայց նոյնիսկ ռուսական ինտելիգենցիան չի կարող այդպիսի յաւակնութիւններ ունենալ։ Մի երկու տարի սրանից առաջ ռուս գրող Մերեժկովսկի Պարիզում մի պտոյտ անելուց, Ժօռէսներին ու Անատոլ Ֆրանսներին այցելելուց յետոյ, գրում էր „Ռէչ“ թերթի մէջ իր տպաւորութիւնները և արհա-

մարհոտ շեշտերով էր խօսում ֆրանսիական սօցիալիստ ինտելիգենցիայի „մեշչանութեան“ *) մասին, հակադրելով այն իր հայրենի մաւորականութեան... Դա մի տարածուած մոլորութիւն է և ռուսների մի ոչ-տեղին յաւակնութիւն։ Անգամ Ռուսաստանի այժմեան վիճակում—որ ստիպում է երևան հանել իդէալիզմի ու անձնազոհութեան բովանդակ պաշարը, որ թելադրում է կռիւ մղել, անդուլ, յուսահատ, թէկուզ և անհաւասար մի կռիւ խեղդող բռնակալութեան դէմ, որի հանդէպ իր ժամանակին արևմտեան ինտելիգենցիան ծառացել է որպէս առիւծ—նոյնիսկ, ասում ենք, այժմեան ծանր, տագնապալի, յեղափոխական վիճակում, դժւար է ասել, թէ կռւի տենդի, թափի, աւիւնի տեսակէտից՝ ռուսական պայքարող ինտելիգենցիան բարձր է, „զօրաւոր է“ ֆրանսիականից, իտալականից, անգլիականից... Ռուս սօցիալիստ ինտելիգենցիայի գաղափարական թռիչքները ուրացողը չենք, բայց և չենք կարող մոռանալ նրա թանձր, ստերային կողմերը, որոնք սակաւ չնպաստեցին Յեղափոխութեան վիժումին։

Դժւար է, վերջապէս, համաձայնել, թէ „Ռուսաստանն այսօր սօցիալիզմի ամենաուժեղ երկիրն է“։ Յարերի երկրում, ճիշտ է, վերջին մի շարք տարիներում անօրինակ սլացք է առել ընկերվարական շարժումը—թէ տեսական, թէ գործնական մէջ—բայց մենք գիտենք ընկերվարականօրէն աւելի ուժեղ երկիրներ՝ Գերմանիան, Ֆրանսիան, Բելգիան։

*

Հետևում են մի շարք ուրիշ տեսութիւններ, որոնց նիւթն են՝ նոյնքան լուրջ ու այժմէական խնդիրներ։ Ընկեր Վ. Տ. մի ընդարձակ յօդուածի մէջ քննում է հայ գրականութեան առնչութիւնը՝ հայ յեղափոխական շարժման հետ։ Քիչ անգամ են շօշափել նման հարցեր մեր տեսական գրականութեան մէջ և իբրև փորձ՝ Վ. Տ.-ի վերլուծումը արժանի է ուշադրութեան։ Հայկական վերածնունդը պատրաստող գրողների համաստեղութեան մէջ՝ Միքայէլ Նալբանդեանը, հարկաւ, արժանի է աւելի խոշոր տեղ բռնելու, մանաւանդ Ստեփաննոս Նազարեանի հանդէպ։ Վերջինս, կատարելով հանդերձ իր որոշ դերը, յարգելի դերը նոյն վերածնութեան պատմութեան մէջ, իր „Հիւսիսափայլ“ով—ունեցել է բաւական դժգոյն ու անհրապոյր հրապարակախօսութիւն և եղել է խիստ շեշտուած հակայեղափոխական մտայնութեան ու խառնուածքի տէր։ Զափազանց նահապետական են նրա հասկացողութիւնները համաշխարհային յեղափոխութիւնների, մասնաւորապէս 1789—93-ի ֆրանսիական մեծագոյն վերիվայրումի մասին։ Նա դիտում է այդ աշխարհադղորդ անցքերը ռուս ու գերման պաշտօնական պատմագիրների ակնոցներով և միանգամայն բացասական դիրք է բռնում, խարանելով Դանտոնների և ներբողելով Լուդովիկոս XVI-ին։

Դժւար է ասել, թէ ո՞վ է ում ստեղծագործութիւնը՝ Նալբանդեանը „Հիւսիսափայլ“ի, թէ „Հիւսիսափայլ“ը Նալբանդեանի։ Մի բան, սակայն, անտարակուսելի է. „կոմս Էմանուէլը“ հոգին էր Մոսկւայի հայ անդրանիկ հանդէսի և որքան աւելի ենք դիտում մեր հայկական հրապարակագիրներին նրանից առաջ և նրանից յետոյ՝ այնքան աւելի է բարձրանում մեր աչքերում Միքայէլ Նալբանդեանի համակրելի, սիրելի պատկերը։

Միայն... չնետենք նրան անարխիզմի, անիշխանականութեան ծոցը։ Բակունինի, Հերցենի, Օգարեովի և այլ ռուս ու եւրոպացի դէմքերի հետ շփուելով ու նրանց ստեղծած գրականութեանը ծանօթանալով, Նալբանդեան իւրացրեց—թէև փոքր ինչ խոպան ձևով—սօցիալիզմի և ոչ անարխիզմի տարերքները։ Ընկեր Վ. Տ. դրականապէս չի շեշտում այդ, այլ միայն ընդունում է իբրև հիպոթէզ, ենթադրութիւն։

Մի փոքրիկ դիտողութիւն ևս. զգուշանալու է դրապաշտ փիլիսոփայութեան հիմնադիր Օգիւստ Կոնտին մտցնելու „դասակարգային պայքարի“ ռահվիրաների շարքը։

„Անհատականութեան“ և „ընկերվարութեան“ յարաբերութիւնները քննում է Դրսեցին։ Իրաւամբ հաստատում է, որ երկու գաղափարները հակոտնեաներ չեն և որ ընկերվարութեան կամ համայնականութեան վարդապետութիւնն ևս իր ձգտման վերջնական նպատակէտ ունի՝ մարդանհատի բազմակողմանի զարգացումն ու բարգաւաճումը։ Այլ բան է, ի հարկէ, Անհատականութիւնը կամ ինդիվիդուալիզմը, մի բուրժուատիպ փիլիսոփայի, մի Սպենսերի կամ Նիչէի ըմբռնումով։ Այդտեղ նա վերածւում է խորունկ անհաւասարութեան։ Ճիշտ է նկատում նաև Դրսեցին, որ ընկերվարութեան սիստեմը չի կարող երբէք հարթել, ջնջել մարդ-անհատների բնական անհաւասարութիւնները — մտքի, մարմնի, հոգու և խառնուածքի—որ ռամկավարացումն ու հաւասարութիւնը չեն կարող յանգիլ լճացման, ամուլ միակերպութեան ու ստրկութեան, ինչպէս յայտարարում են բուրժուա թէորետիկոսները, այլ որ ընկերվարութեան, համայնականութեան սիստեմի մէջ ևս կը փթթին—և աւելի մեծ դիւրութեամբ ու առատութեամբ — անհատական ուժերը, տաղանդներն ու հանճարները, մեծ մարդիկ, գերմարդիկ։ Աւելի մեծ դիւրութեամբ ու առատութեամբ՝ քանի որ միանգամ ընդմիշտ վերացած կը լինին ժամանակակից հասարակութեան հիմքը կրծող չարիքները, տնտեսական և ամեն ուրիշ տարկանոնութիւններ, որոնք խեղդում, կաշկանդում են հարիւր միլիոնաւոր զանգուածներին. աւելի մեծ դիւրութեամբ ու առատութեամբ՝ քանի որ մարդկութիւնը միանգամ ընդմիշտ ազատուած կը լինի նիւթական կարօտութեան պատուհասներից, ներքին արիւնահեղ բաղխումներից, բիրտ ու դաժան գոյամարտի անհրաժեշտութիւններից և կուղղէ իր ներդաշնակ ճիգերը, իր գոյութեան պայքարը միակ թշնամու—բնութեան դէմ...

Կուսակցութեան կեանքի կարևոր խնդիրներ է շօշափում և Հրազդանի յօդուածը՝ „Մեր գործը և նրա նախապայմանները“, որ տակաւին շարունակելի է։ Մի թեթև վրիպումն—և այդտեղ։ Անարդար կը լինէր՝ այն ատրճան սահմանափակել ժամանակակից սօցիալիզմի հիմնադիրների ցանկը։ Սօցիալիզմը երկու դէմք ունի. նա միանգամայն շարժումն է և վարդապետութիւն։ Իբրև շարժում, իբրև որոշ գաղափարների գործնական կիրառութիւն, նա հիմնուած է,

*) Գռեհիկ քաղքենութիւն։

նախաձեռնած յեղափոխութիւնների կլասսիկ հայրենիքում — Ֆրանսիայի մէջ... Հիմնուած է ընկերվարական դաւադրութիւններով, ապստամբութիւններով, գլխատումներով, ապա և մասսային գործադուլներով։ Այդ սոցիալիզմի հիմնադրութեան հետ Գերմանիան առնչութիւն չունի։ XIX դարի սկզբում նա դեռ գրեթէ բոլորովին մի խոպան միջավայր էր՝ ոչ միայն սոցիալական, այլ և քաղաքական-սահմանադրական գաղափարների տեսակէտից։ (Անտեսում ենք ազգային-ազատագրական շարժումները և կղզիացած անհատական ժեստերը յանուն քաղաքական յեղաշրջման)։

Սոցիալիզմը, իբրև դոքտրին, վարդապետութիւն, ժամանակակից սոցիալիզմը, դասակարգային պայքարը շեշտող և դրւատող սոցիալիզմը՝ չի հիմնուած միայն Գերմանիայում։ Հիմնադիրների շարքումն են Ֆրանսիայի մեծագոյն յեղափոխական զաւակներից մի քանիսը. — Գրակխուս Բաբեօֆ, Օգիւստ Բլանկի, Վիկտոր Կոնսիդերան, դեռ չխօսելով ուրիշների մասին։ Ճիշտ է, նրանք Մարքսի պէս որոշ կերպով չեն ձևակերպել դասակարգային շերտաւորումների արժէքը և դասակարգային պայքարը, սակայն այդ դեռ չի նշանակում հիմնադիր չլինել սոցիալիզմի։ Մեր ընկերը չի ասի, ի հարկէ, թէ ժամանակակից սոցիալիզմը միմիայն մարքսիզմի մէջ է, նա չի էլ յանգի մանր ու խոշոր „ուղղագաւանների“ սիրած եզրակացութեան՝ թէ սոցիալիզմը գիտութիւն դարձաւ՝ միայն „տնտեսական մատերիալիզմի“ և „յաւելեալ արժէքի“ գիւտով։ Որ մարքսիզմը և մասնաւորապէս „տնտեսական մատերիալիզմը“ դեռ հեռու են բուն գիտութեան հետ նոյնանալուց (Identifizierung)—այդ մասին վիճում են այսօր միայն սոցիալ-դեմօկրատները ուղղափառ դոգմատիկների բանակում։ Անգամ Էնգելսը դժուար թէ այդքան նեղցներ Ֆօրմուլը, երբ հարցը գար նրան՝ թէ ո՞վ է հիմնել ժամանակակից սոցիալիզմը և ի՞նչ տարերքների վրայ է նա հիմնուած։ Ապացոյց՝ թէկուզ նրա „Գիտական սոցիալիզմի“ առաջին տողերը։

Կան ուրիշ տեսութիւններ ևս „Ուսանող“ի մէջ, բաւականաչափ մշակուած։ Ցիշենք մեր Թիւրքահայ ընկեր Տ. Խ.-ի յօդուածը բնագիտական աշխարհից՝ „Պահպանութիւն և ինքնապաշտպանութիւն“ խորագրով։ Բնագիտական թէօրիաներից և անասնական տեսակներից չուելով՝ նա յանգում է այն եզրակացութեան, որ „ինքնապաշտպանութիւնը տիեզերական օրէնք է... և այնտեղ, ուր նա կը դադրի... անէացման գիրկը կը նետէ թոյլ, անպատրաստ կենդանական տեսակները, մարդկային հասարակութիւնները, պետութիւնները, մանր ազգութիւններն ու անհատները“։

Հետաքրքրական է „Ուսանող“ի ամբողջ յօդուածաշարքը։ Ժամանակը և տեղը չեն թոյլ տալիս աւելի երկար կանգ առնելու։ Կուզէինք վերջացնել մի ընդհանուր և ընկերական դիտողութեամբ։ Ցանկալի է՝ աւելի ևս ժողովրդականացրած, մատչելի ձևով ներկայացնել հասարակագիտական և բնագիտական այնքան բարդ խնդիրները։ Տեղ-տեղ նոյնիսկ անհրաժեշտ է սկսել այբուբէնից։ Այդպէս օրինակ՝ սխալւում է, անտարակոյս, Դրսեցին, երբ նա „աւելորդ է համարում կանգ առնելու Դիչէի անհատական վարդապետութեան, գերմարդու տեսութեան վրայ, քանի որ նրա կարծիքով՝ „դա համարեա ծանօթ մի վարդապետութիւն է“... Եթէ այդ տեսակ խնդիրները այդ աստիճան ծանօթ լինէին մեր միջավայրում, գուցէ „Ուսանող“ի և այլ նման հրատարակութիւնների պէտք էլ չունենային։ Այդպէս չէ, տարաբախտաբար։ Եւ քանի որ հանդէսը ուղղում է իր խօսքը մի անպատրաստ լսարանի (չմոռանանք և մեր Թիւրքահայ դպրոցական երիտասարդութիւնը), քանի որ „Ուսանող“ը յայտնւում է միանգամայն և „Ուսուցանող“ի դերի մէջ, ապա պէտք է որ նա առաջադրէ իր թեզիսները ըստ կարելւոյն պարզ ու մատչելի։

**

«ՆՈՐ ԽՕՍՔ» ԵՒ «ՆՈՐ ԿԵԱՆՔ»

—

Երկրի մէջ ևս մերթ ընդ մերթ լոյս են տեսնում հրատարակութիւններ—մեզ համակիր կամ հակառակորդ — որոնք գրեթէ բոլորը ձգտում են գիտական-փիլիսոփայական գունաւորումն ընդունել՝ մասամբ ապրելու մտահոգութեամբ, մասամբ էլ օրինաւոր ու գովելի ցանկութեամբ՝ յագեցնել ըստ կարելւոյն հարցասէր երիտասարդութեան ծարաւը, գաղափարային հոսանքների մէջ տարուբերող երիտասարդութիւնը։

Բացուում նորերս լոյս տեսած երկու վերոյիշեալ հրատարակութիւնները մեզ հակառակորդ են. արծարծում են մի շարք յօդուածների մեջ թէօրիական մարքսիզմի գաղափարները և ձգտում են նրանցով լուսաբանել մեր հայկական իրականութեան կնճիռները։

Համակրելի և խրախուսելի է մեր երիտասարդ մտաւորականութեան թէ „համախոհ“ և թէ „հակառակորդ“ հատուածների այդ եռանդը։ Լաւ է՝ որ շարունակում են ոգևորուել ու որոնել, արձագանք տալ ժամանակակից հոսանքներին և թոյլ չտալ, որ գաղափարային կեանքը մեռնի, միտքը թմրի բռնակալութեան արձիճային ճընշման տակ։

Այդ երևոյթը մեր ներկայ մռայլ իրականութեան մէջ ինքնին այնքան ուրախալի է, որ մենք շատ էլ չենք վշտանում այն տենդոտ յարձակումներից, որ տեղում են՝ երկու յիշեալ հրատարակութիւնների մէջ՝ դաշնակցական գրականութեան, մասնաւորապէս „Հոսանքներ“ի ու նրա հեղինակի դէմ, այն հիմնական խեղաթիւրումներից, որոնց ենթարկուում է այդ գրուածքը և որոնք իրենց սպեցիֆիկ բնոյթով չեզոքացնում են պատասխանելու ամեն մի հնարաւորութիւն։ Ի՞նչ ասել կուզէ՝ մենք կը բաղձայինք—և մեր վաղեմի բաղձանքն է այդ—որ գրելու և պայքարելու տենդի հետ միասին՝ փոքր ինչ բարձրանար մեր երիտասարդութեան քաղաքացիական հասունութեան մակերևոյթը, փոքր ինչ ազնւանային պոլեմիկական մեր բարքերը։

Ճիշտ է, „տնտեսական մատերիալիզմը“ ժխտում է գաղափարների, բարոյական հասկացողութիւնների ուրոյն, անկախ գոյութիւնը և դնում է նրանց մշտնջենական կախման մէջ նիւթական, դասակարգային շահերից ու յարաբերութիւններից.—այնուամենայնիւ, որոշ սկզբ-

բունքներ էտիկայի հրապարակում—շիտակութիւն, ազնուութիւն—պէտք է լինին պարտադիր՝ նաև հայ մարքսիստների համար։ Թէ չէ, ճշմարիտ, գրականութիւնը կորցնում է ամեն համ ու հրապոյր և մեր աճող սերունդը, ի տեղի գերազանցելու նախորդին, մանրանում է նրա պէս *)։

***

«ԲՐԿԻՉՆԵՐ, ԹԷ ԿՈՐԾԱՆԻՉՆԵՐ»

Լ. Մարտովի

—

Հերձուածը շարունակում է իր անմաքուր և աւերիչ աշխատանքը ռուսական Սոցիալ-Դեմօկրատիայի մէջ։ Դրա մի տխուր վկայութիւնն է Մարտովի այս գրքոյկը։ Մի սարսափելի ամբաստանագիր կուսակցութեան այսպէս կոչուած „մեծամասնական“ հատուածի դէմ։ Ինչպէս յայտնի է, Լոնդոնի համագումարից ի վեր (1906 թ.) կուսակցութեան կենտրոնական մարմինները գտնւում են մեծամասնականների, բոլշեվիկների ձեռքում։ Եւ ահա մի քանի տարի շարունակ երկու հատուածները, որպէս երկու հակամարտ աղանդներ, մենամարտում են ու թափում իրարու վրայ անլուր ամբաստանութիւններ։

„Փոքրամասնականները (մենշեվիկները) ուզում են իսպառ կազմալուծել կուսակցութիւնը, լիկվիդացիայի ենթարկել նրան և կօմպրօմիսի ու հաշտութեան քաղաքականութիւն սկսել ցարական կառավարութեան հետ“—այսպէս են ասում մեծամասնականները (բոլշեվիկները)։

„Բոլշեվիկները ուզուրպատօրներ են, նրանք ապօրինի ձևով, կեղծ մանդատներով զաւթել են կուսակցութեան կենտրօնները, դաւանում են ա ն ա ր խ օ-բ լ ա ն կ ի զ մ, հանդիսանում են արկածախնդիր աղանդաւորներ, նպաստում են դրանով ռէակցիային, փճացնում են պրոլետարիատը, կործանում են սոցիալ-դեմօկրատիան“։

Այդպէս էլ ասում է Մարտով. բոլշեվիկների աղանդը կործանեց ռուսական սոցիալ-դեմօկրատիան։ Եւ նա ողբում է, հեծկլտում այդ անկումի աւերակների վրայ։ Եւ որակում է կործանիչներին (Լենինի թևը) ամենավատ ածականներով. լակէյներ, խաբեբաներ, դրամաշորթներ...

„Անարխո-բլանկիզմ“... Ուշագրաւ է մանաւանդ այդ մեղադրանքը։ Երանի չէ՞ր, թէ փոքր ինչ, յիրաւի, արծարծուէր անարխո-բլանկիստական, „ապստամբական“ մեթոդը ռուս ս.-դ.-ների կրաւորական շարքերի մէջ... Ի՞նչ են անում բոլշեվիկները։ Նրանք բոյկոտ են հրատարակում պետական Դումայի դէմ, հաժարում են այն աւելորդ ու վնասակար, և ուզում են յետ կոչել այդ Դումայի ս.-դ. պատգամաւորներին։ Նրանք քարոզում են նաև՝ մտնել „գետնի տակ“, դիմել իլլեգալ, անօրինական գործունէութեան, երբեմն էլ խրախուսում են (խօսքով միայն) ռազմական տակտիկը—և ահա այդ համեստ պահանջների համար նրանք որակւում են „անարխիստներ“, „բլանկիստներ“, „դաւադիրներ“... Մարտովների, Պլէխանովների ու Աքսէլրոդների կողմից, որոնք սոսկում են դաւադրական, յեղափոխական մեթոդներից և ապաւինում են խաղաղ, օրինական տակտիկին... Թէկուզ և պէտք լինի սպասել մինչև ռուսական նոր գարունը՝ հարիւր տարի ևս։

Ողբալի է։ Մենշեվիկները՝ իրօք կուում են ուրբականների դէմ։ Սոցիալ-դեմօկրատիան, իր բոլոր թևերով ու հատուածներով, ռուսական Սոցիալ-դեմօկրատիան՝ շարունակում է, շարունակելու է միշտ իր վաղեմի դաւանանքն ու տակտիկը—էապէս կրաւորական, խաղաղառաջադիմական—և դարձեալ նա չէ, հաւանականօրէն, որ պիտի սկսէ Ռուսաստանի գալոց վերիվայրումը։

Երկու թևերի անվերջ պայքարը թողնում է ճնշող տպաւորութիւն։ Ամենածանր ամբաստանութիւններ ենք կարդում Մարտովի բրոշիւրի մէջ. և ամենից ճնշողը դրամաշորթութեան մեղադրանքը։ Մեծամասնականների ղեկավար անհատներ, ասում է նա բարձրաձայն, իւրացրել են կուսակցական գործերի համար նիւթաբերուած գումարներ...

Եւ ինչպէ՞ս չեն խնայում այդ մարդիկ իրենց որդեգրած դատի միլիոնաւոր ներկայացուցիչներին, խեղճ ու ընկճուած աշխատաւոր ընդհանրութիւնը, որ ներկայ մռայլ շրջանում միաբանութիւն և խրախոյս է ակնկալում իր մտաւոր առաջնորդներից..

Վ.

*) Պէտք է նաև դիտել տալ մեր եւանդուն հայրենակիցներին, որ մենք տակաւին ապրում ենք բուրժուական իրաւակարգի մէջ, որ մասնաւոր սեփականութիւնը դեռ ևս գոյութիւն ունի՝ ոչ միայն իրերի, այլև գրական անունների վրայ։ Այդ տեսակէտով մենք բնաւ պատեհ չենք տեսնում, երբ նորածին հանդէսի խմբագիրներից մէկը ստորագրում է իր էջերի տակ՝ *Ego*, միւսը՝ Ակնունի (վերջինիս քովը մի „Գ.“, որ չի կանխի շատերի պատրանքը)։

ՆԻՒԹԱՏՈՒՀԹԻՒՆ

Պոլսոյ Կեդր. Կոմիտէն սացած է՝

1908 յուլիսէն մինչ 1910 դեկտ. 30.—

Բերայի ենթակոմիտէն.—Հեռեւեալ խումբերէ՝ Կայծ 158 դրուշ, Նինուէ 105, Սուրհանդակ 90, Վիթխարի 135, Սալոնիոր 125, Կէրչէվիլ 182. 20, Շամիրամ 105, Շամէ 138, Սիփան 127. 20, Աշտարակ 121, Արամսի 30, Միացեալ 117. 20, Վարազ 30, Ոյժ 391, Սարասի 115, Աղբիւր-Սերոբ 75, Պէշիկթաշի խումբերէն 206, ուէր Արարատ թիւ 12՝ 216, Գեղամի միջոցով 42, Պալամեանէ (Աւստրալիա) ուէր 240, Տիվրիկցիներու խմբ. 70, Խաս գեղի Ոռոս խ. 47, Ժանտարգ խ. 85, Վիթխարի խ. 59, Օվանդրգի խ. 20 դրշ.:

Սկիւտարի ենթակոմիտէն. — Հեռեւեալ խումբերէ՝ Վրէժ 27 դրշ., Անազանգ 50, Երուանդ Եղիշէ 35, Արմէն Զաւէն 127. 20, Աւոր 136. 20, Սնդիկ 130, Նոր-Սերունդ 126, Դաղը գիւղի խումբերէն 137, Ոսկեմայր 65, Վազգէն 201, Զաւէն 444. 20, Արածանի 81, Վառօղ 327. 20, Ալէմ-Տաղի Արեւ խ. 37. 20, Արազ 53. 20, Պայքար 136, Հերոս 40, զանազաններէ 20 դրշ.:

Պոլսոյ շրջանակի մարմիններէն. — Հեռեւեալ խումբերէ՝ Ե. Թոփչեան 269 դրշ., Գնունի 204, Հարազատ 142. 50, Պարոյր Հայկազն 88, Թօփ-Դաքուի խումբերէն 255, Ղարիբ 35, Կարմիր բերդի Շամէ խ. 32, Աւազուտի Անդրանիկ խ. 135, Բերդի քաղի զանազան խումբերէ 70, Օժանդակ Մրրիկ 25, Աշտարակ 213, Աւազուտի Փոքրիկ խ. 48, Ծովասարի Մասքար խ. 127. 20, Անաբեկիչ 120, Գաչբերունի 388, Ծովասարի Բաբկէն խ. 158, Բերդի Ասմանազեան խ. 116, Սասուն 10, Խինի Հրեշտակ խ. 50, Աւազուտի Հայկազն խ. 20, Արշաւիր 117, Վարդան 134, Սալմաթօմրուզի 68, Հայկազեան 35, Հրայր 42. 20, Կրակոս 148, Հրեշտակ 137, Վարդգէս 20, Մրճեր 41, Լուսինեան 35, Ծովասարի Օժանդակ խ. 112. 20, Պեսօ 30, Արժան 23, Պայքար 11, Կովկաս 42, Կայծակ 42, Արարատ 12, զանազան ընկերներու անդամավճարներէ 15, ուէրներ 89 դրշ.:

Պալիա Մաշենի կազմէն՝ խմբական անդամավճարներ 432 դրշ.:

(Շարունակութիւնը միւս համարում)